Ազգ

AZG
armenian newspaper

Ա տարի, # 10, մարտ 20, 1991

ՀԱՍՀ-Արմ.ՍՍՀ

ՍԵՓԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԼԻՆՈՒՄ

Սեփական, անհատական, մասնավոր ժողովրդավարություն կամ ռամկավարություն չի լինում, ինչպես չի լինում սեփական արդարություն եւ արդարադատություն:

Այսինքն՝ լինում է, սակայն այն այլեւս չի կոչվում ժողովրդավարություն, ռամկավարություն, այլ՝ անիշխանականություն, կամ՝ ջունգլիի օրենք...

Արծաններ են այլանդակվում, զմռսած դռներ են ջարդվում, այլապատկան շենքեր են գրավվում, պետական հիմնարկի աշխատողներին սպառնալիքներ են ներկայացվում, հափշտակված մեքենաների վրա սեփական «թվագրում» է կատարվում, խորհրդարանի կողմից հաստատված զորակոչի օրենքներ են ոտնակոխվում, դասալքությունն է քաջալերվում, դասալիքների հավաքագրում եւ «ազատագրում» է կազմակերպվում...

Եվ այս բոլորը՝ օրենքի, օրինականության, իրավունքի եւ... ժողովրդավարության անունից, հանուն անկախության, հանուն նաեւ... անհատական իրավունքի եւ ինքնահաստատման:

Եվ այս բոլորը՝ այն օրերին, երբ մեր հորապետական երկիրը բոլորում է իր պատմության առաջին եւ ամենաճակատագրական պահերից մեկը, ներքին եւ արտաքին բոլորովին անբարենպաստ պայմանների տակ:

Ապակայունացում: Այս է լինելու եւ է՛ արդյունքն այդ անկարելի ժողովրդավարության: Այսինքն այն՝ որից այնքան խուսափում ենք բոլորս, եւ որն այնքան բարեմաղթվում է մեր ժողովրդի հակառակորդների կողմից:

Ո՛չ, այս ժողովրդավարությունը ոչ մի կապ չունի... ժողովրդի հետ, ոչ մի կապ չունի ռամկավարության հետ, ոչ մի կապ չունի մեր ժողովրդի իրավական եւ օրինական պետության ստեղծելու ձգտման հետ, եւ ոչ էլ՝ ժողովրդի դավանած անկախության հետ, որի երկունքում ենք գտնվում մենք այսօր, ազգովին:

Խորհրդարանը նախազգուշացնում է ԱԻՄ-ին

Երեկ տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանը, որի օրակարգում դրված էր մեկ հարց. «Ազգային ինքնորոշում միավորման» գործունեության քննարկումը:

Պատճառը ԱԻՄ-ի վերջին ժամանակների հակաօրինական գործողություններն էին. արձանների հանդեպ «բարբարոս քայլերը», շենքերի գրավումը («Գավլիտ», ՀԿԿ քաղկոմ), զորակոչի խոչընդոտումը:

Անցած գիշեր Հայաստանի ներքին զորքերի ուժերով ազատվել էր ԱԻՄ-ի կողմից զբաղեցրած ՀԿԿ Երեւանի քաղկոմի շենքը:

Իր ելույթում Պարույր Հայրիկյանը փորձեց արդարացնել ԱԻՄ-ի գործողությունները, մասնավորապես ասելով, որ քաղկոմի շենքի գրավումը՝ հատուցումն է բանտում անցկացրած տարիների համար, նաեւ նշելով, որ ինքը դասալքության քարոզիչ չէ, այլ Հայոց Սպարապետության ստեղծման կողմնակից:

Այնուհետեւ նա ամբաստանեց իշխանություններին այլակարծությունը ճնշելու փորձեր կատարելու մեջ:

Խորհրդարանի նախագահը հատուկ նշեց, որ այս քննարկման նպատակը ոչ թե պատժողական է, այլ կանխարգելակող:

Հայաստանի Գերագույն խորհուրդը երկու որոշում ընդունեց, որոնցից առաջինով ԱԻՄ կազմակերպությանը նախազգուշացրեց իր *«հակաօրինական գործողությունների համար, որոնք նպաստում են հանրապետության քաղաքական կյանքի ապակայունացմանը եւ հանրապետության պաշտպանությանն ուղղված միջոցառումների ձախողմանը, հղի են վտանգավոր հետեւանքներով»*:

Նախարարների խորհրդին առաջարկվեց այդպիսի գործողությունները կրկնվելու դեպքում վերանայել ԱԻՄ-ի կանոնադրության գրանցման հարցը:

Ըստ երկրորդ որոշման, բոլոր այն երիտասարդները, որոնք չեն վերադառնա իրենց զորամասերը մինչեւ մարտի 26-ի ժամը 18-ը, կհամարվեն դասալիքներ եւ նրանց նկատմամբ կկիրառվի համապատասխան օրենքը:

Նստաշրջանի ամբողջ ընթացքում Խորհրդարանի շենքի առջեւ հավաքվածները վանկարկում էին իշխանության դեմ ուղղված կարգախոսներ: Նստաշրջանի ավարտից հետո շենքի մուտքի մոտ ստեղծվեց լարված իրավիճակ:

Քրդերը հայտարարում են Քերքուկի գրավումը

Քուրդիստանի հայրենասիրական միություն կիսազինվորական կազմակերպությունը, որը համարվում է քրդական զինյալ պայքարի կարեւորագույն երկու առաջամարտիկներից մեկը, երեկ հայտարարեց, թե արդեն իսկ ամբողջացրել է Հյուսիսային Իրաքի նավթարդյունաբերական կարեւորագույն կենտրոնի՝ Քերքուկ քաղաքի գրավումը իրաքյան բանակային ուժերի ձեռքից, շուրջ 5 օր տեւած կատաղի կռիվներից հետո: Այն մեղադրեց իրաքյան բանակին, թե սա բախումների ընթացքում օգտագործել է նապալմ հրկիզող ռումբեր:

Թեեւ անկախ որեւէ կողմ չկարողացավ հաստատել այս լուրը, սակայն ամերիկյան պաշտոնական աղբյուրները երեկ հայտարարեցին, թե քրդական ուժերը վերջին օրերին մեծ առաջխաղացում են կատարել երկրի հյուսիսային՝ մեծամասնությամբ քրդաբնակ շրջաններում, որտեղ հաճառ կռիվներ են տեղի ունենում իրաքյան «հանրապետական պահակագնդի» զինվորների եւ ապստամբների միջեւ:

Մյուս կողմից, իրանյան ԻՐՆԱ պաշտոնական գործակալությունը երեկ վկայակոչելով հարավային Իրաքից հասած փախստականներին, հավատիացրեց, որ Իրաքի հարավարեւելյան շրջաններում եւ հատկապես Բասրա քաղաքում կռիվների հետեւանքով զոհվել են բազմաթիվ մարդիկ, քաղաքացիներ ու զինվորներ, որոնց դիակները դեռ մնում են փողոցներում:

Իր հերթին, ամերիկյան բանակի մի բաներեր երկուշաբթի օրը հաստատել էր, որ դաշնակից զորքերի հրամանատարությունը շաբաթ օրը ստիպված է եղել իրաքյան կողմին զգուշացնելու, որ համաձայն հաստատված զինադադարի պայմանների, նա իրավունք չունի ռազմաօդային որեւէ ուժ օգտագործելու:

Ինչպես հայտնի է, իրաքյան բանակը շիա արմատականների դեմ քանիցս օգտագործել էր ռազմական օդային տեխնիկա:

Սադդամը խոստանում է նոր կառավարություն

Երեկ առավոտյան տեղական մամուլին տրված հաղորդագրությամբ, իսկ երեկոյան ռադիոյով, Իրաքի փոխնախագահ Մեհդի Սալեհը եւ նախագահ Սադդամ Հուսեյնը հաջորդաբար հայտարարեցին գրեթե նույնը, խոստանալով շուտով երկրում կազմել նոր կառավարություն եւ հաստատել բազմակուսակցական դրություն, իշխանության մասնակից դարձնելու համար քաղաքական տարբեր ուժերի:

Արեւմտյան աղբյուրների կողմից այս զույգ հայտարարությունները դիտվեցին իբրեւ հուսահատական քայլ՝ փրկելու Սադդամ Հուսեյնի քայքայվող իշխանությունը:

Իրանը դատապարտում է

Իրանի հոգեւոր ղեկավար Սեյյեդ Ալի Խամենեին երկուշաբթի օրը (մարտի 18) հայտարարեց, որ ամբողջ Իրաքում շարունակվող արյունալի բախումները բանակի եւ ապստամբ ուժերի միջեւ թույլ են տալիս ենթադրել, որ շուտով Սադդամ Հուսեյնը կկորցնի իր իշխանությունը: Իրանի ռադիոն մարտի 18-ին վկայակոչելով Խամենեիի ելույթը, հույս հայտնեց, որ շուտով Բաղդադում կհաստատվի ժողովրդի կամքն արտահայտող մի վարչակարգ: Իրաքում հակապետական համատարած բողոքի ցույցերից եւ ապստամբությունից հետո առաջին անգամ ելույթ ունենալով, Խամենեին Սադդամ Հուսեյնին անվանեց վտանգավոր տարր, եւ նշեց, որ նա մեծ վնասներ է պատճառում մուսուլման ազգարնակչությանը: Նա Քարբալայի եւ Նաջաֆի շիա մահմեդականներին պատկանող սրբավայրերին հասցրած վնասների համար խիստ դատապարտեց Իրաքի կառավարությանը: Նշենք, որ Իրանը մինչ այդ պաշտոնապես բողոք էր ներկայացրել Իրաքին. Սակայն Իրաքը պնդում է, որ այդ վնասները պատճառել են խռովարարներն ու հանցավոր տարրերը, եւ ներկայումս Իրաքը մեծ ջանքեր է գործադրում այդ սրբավայրերի վերականգնելու ուղղությամբ:

Խամենեին իր ելույթում Սադդամ Հուսեյնին ուղղած մեղադրանքներից բացի, դիմելով ԱՄՆ-ին, զգուշացրեց, որ ամերիկյան ռազմական ուժերի ներկայությունը Պարսից ծոցում հղի է վտանգավոր հետեւանքներով եւ Ամերիկան այդ բանի համար կարող է ավելի թանկ վճարել, քան՝ Լիբանանում: Հիշեցնենք, որ 1983թ. Լիբանանում ամերիկյան զորակայաններից մեկի վրա կազմակերպված հարձակման հետեւանքով զոհվեցին 240 ամերիկացի զինվորներ:

«Մեզ սպառնում է սով»

«Կրեստյանսկայա» կուսակցության 1-ին համագումարի բացմանը հայտարարեց ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Ցուրի Զեռնիչենկոն:

Երկրի ներկա դրությունը նա համեմատեց 30-ական թվականների հետ. 54 մլն. տ. ցորենի փոխարեն միայն 34 մլն. տ. է պահեստավորվել, իսկ արտասահմանից գնելու համար վալյուտա չկա:

Համագումարը քննարկեց կազմակերպական հարցեր եւ որպես կարգախոս հաստատեց «Ազատ աշխատանք սեփական հողում» բանաձեւը:

Դարձյալ դատանդների մասին

Երկուշաբթի օրը (մարտի 18) Իրանի խորհրդարանի նախագահ Հ. Ռաֆսանջանին Թեհրանում հանդիպում ունեցավ Լիբանանի «Հեզբոլլահ» կազմակերպության ղեկավարներից մեկի հետ: Ենթադրվում է, որ կողմերը հանդիպման ժամանակ քննարկել են Լիբանանում պահվող ամերիկացի եւ անգլիացի պատանդների ճակատագրի հարցը: Իսկ մեկ օր առաջ Սիրիայի փոխպրեզիդենտ Արդուլհալիմ Խադդամը պատանդների հարցի քննարկման համար հանդիպեց Լիբանանի ղեկավարների հետ:

Հիշեցնում ենք, որ անցյալ շաբաթ Սիրիայի ղեկավարները հաստատել են Զեյմս Բեյքերին պատանդների արձակման գործում ջանք չխնայել: *«Նյու Յորք Թայմզ»* օրաթերթը անցյալ շաբաթ հաղորդել էր, որ Լիբանանի իրանամետ կազմակերպությունների եւ Թեհրանի միջեւ պատանդների հարցի վերաբերյալ բանակցություններ են ընթանում:

Հարավսլավական բանակը միջամտելու է, եթե...

Բարդ ու լարված վիճակ է նաեւ Հարավսլավիայում, որտեղ սերբերը վերջին շրջանում ընդունել էին մնացյալ հինգ ազգություններից անջատվելու իրարահաջորդ որոշումներ, որի հետեւանքով մայրաքաղաք Բելգրադում եւ այլ վայրերում անցյալ շաբաթ տեղի էին ունեցել արյունալի բախումներ: Ի վերջո, բանակին հաջողվել էր վերահաստատել կարգուկանոնը, եւ տարակարծությունները տեղափոխել քաղաքական ոլորտ:

Այսուհանդերձ, բանակի ուժային ներկայությունը փողոցներում եւ հասարակական վայրերում մտավախություն է առաջացրել շատերի մոտ: Այդ է պատճառը, որ երեկ հարավսլավական բանակի հրամանատարությունը հրապարակեց մի նոր հաղորդագրություն, որտեղ խոստանում է չմիջամտել քաղաքական վեճերին, եթե իրավիճակը կտրուկ փոփոխություններ չկրի:

Ալբանիան ձեռնարկում է հողի սեփականաշնորհում

Ալբանիայում ստեղծված անտանելի իրավիճակը ստիպել է տեղի իշխանություններին ձեռնարկել հողի սեփականաշնորհման աշխատանքներին:

Սննդեղենի պակասի պատճառով իշխանությունները երախտագիտությամբ են ընդունում եւրոպական երկրների օգնությունը: Իտալական մի պատվիրակություն երեկ ժամանել է Տիրանա եւ 17 տոննա սննդամթերք բաժանել բնակչությանը:

digitised by A.R.A.R.@

Ինչպես խոստացել էինք, ձեր ուշադրությանն ենք ներկայացնում մանրամասները մարտի 15-ին Գերագույն խորհրդում տեղի ունեցած պատգամավորական խորհրդակցության, որը հրավիրվել էր մի խումբ պատգամավորների պահանջով՝ վերանայել 1921 թվականի մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրի Հայաստանի վերաբերվող կետերը:

Մեկնաբանություններից ձեռնպահ ենք մնում:

1921թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագիրը Գերագույն խորհրդում

Լևոն Տեր-Պետրոսյան. *(խոսելով Ցուրի Բարսեղովի «պլատֆորմի» մասին, ինչը վկայակոչում էր ռուս-թուրքական պայմանագիրը արտաներք նստաշրջանում վերանայելու ամենաակտիվ կողմնակից Ռուբեն Հակոբյանը)*

«Դա մի ռուսախոս իրավաբան է, որ հայ ժողովրդի ճակատագիրը պիտի որոշի՞...»:

Տիգրան Կյուրեղյան. «...Մենք պետք է քաղաքական ակտ անենք, որպեսզի ցույց տանք, որ ԽՍՀՄ-ը չի կարող առանց մեր մասնակցության ինչ-որ հարաբերություններ ճշտել: ...Այս պայմանագրի Հայաստանին վերաբերող համապատասխան հոդվածների չեղյալ հայտարարելը... ես կասեի, հակառուս քայլ է, որովհետև Ռուսաստանի դեմ է նաև ուղղված»:

Լևոն Տեր-Պետրոսյան. «Իսկ մեր նպատակն է հակառո՞ւս լինել»:

«...Պետք է հիմնավորել այդ հարցի կարեւորությունը այսօր մեր հանրապետության քաղաքական ճակատագրի համար»:

Վիգեն Ծիրինյան. *Արցախ.* «...Ես այսպես եմ մտածում, որ ցանկացած հայ հիմա չի կարող Օզալի ԽՍՀՄ գալու փաստի կողքով անտարբեր անցնել»:

Հրայր Կարապետյան, *ՀՀԴ. Հայաստանի Կենտրոնական կոմիտեի քաղաքական դիվանի ներկայացուցիչ.* «Ինձ հանձնարարված է նստացույցի կազմակերպիչների անունից ընթերցել այստեղ մի նախագիծ, որտեղ, կարծում եմ, կա բավականաչափ հիմնավորում այն հարցի, որն այստեղ այսօր քննարկվում է...»

Լևոն Տեր-Պետրոսյան. *Խոսելով ՀՀԴ-ի «1921 թ. Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերի քաղաքական ու միջազգային իրավական գնահատականի վերաբերյալ» Հայաստանի Գերագույն խորհրդի որոշման նախագծի մասին.* «...Այստեղ ոչ մի քաղաքական հիմնավորում չկա: ...Սա դաշնակցական կուսակցության փաստաթուղթն է, որը հիմա Ռուբեն Հակոբյանը, որ նախաձեռնող խմբից էր, ինձ ներկայացրեց որպես իրենց փաստաթուղթը... Ինչո՞ւ ենք պահմտոցի խաղում...»

... Արտերկիրը չպետք է շահարկել...»

«...Ալեքսան Հակոբյանն ասաց. «Սա ՊԱԿ-ի ծրագիրն է», բայց դա չի նշանակում, որ բոլոր այն մարդիկ, որ պնդում են այս հարցի վրա, անկեղծ չեն... Քաղաքականության մեջ լինում է, որ ակամայից ամենաազնիվ, հայրենասիրական մղումները ծառայեցվել են քաղաքական ուժերի նպատակներին: Ես էլ իմ համոզումն ունեմ, որ սա որոշակի քաղաքական ուժերի ծրագիր է, եւ ես ուրախ կլինեի, որ այդ քաղաքական ուժերը բացահայտվեին»:

Հովհաննես Իգիթյան. «Ես համոզված եմ, որ ամեն մի հայ իր ամեն մի բջիջով դեմ է այդ պայմանագրին եւ երբեք օրինական չի ճանաչի...

Այս հարցի քննարկումը խորհրդարանում հոյակապ առիթ է ոմանց համար՝ վարկաբեկելու իշխանությունը...»

Մերուժան Տեր-Գուլանյան. «...Միայն նրա համար, որ Գորբաչովը եւ Օզալը հանդիպել են, արտաներք նստաշրջան հրավիրել, այսպես խառնվել իրար, առճակատման գնալ, նստացույցով սկսել, եւ այլն, ես կարծում եմ, որ սա ճիշտ չի...»

Լևոն Տեր-Պետրոսյան. «...Այս հարցի նախաձեռնողը Գալոյանն էր Կոչետկովի եւ Հարությունյանի հետ միասին, որոնք Մոսկվայում մշակեցին, բերեցին այստեղ եւ ուզեցին անցկացնել այդ հարցը... Մոռացե՞լ եք պատմությունը...»

Հրաչիկ Սիմոնյան. «...Մենք պետք է կարողանանք շատ պարզորոշ սահմանազատենք երկու բան, իրավունք եւ նպատակահարմարություն:

...Ոչ մի կասկած լինել չի կարող, որ

քանի գոյություն ունի հայ ժողովուրդը, քանի կա մի հայ, Հայ դատը պիտի ապրի:

Բայց կա նաեւ նպատակահարմարության հարց: Մենք սա որդեգրում ենք որպես պետական քաղաքականություն, թե՞ ոչ:

Բոլոր զանգվածային միջոցների օգնությամբ մենք միշտ թարմ պիտի պահենք Հայ դատը:

Սակայն կարո՞ղ ենք մենք, արդյոք, որդեգրել Հայ դատը որպես պետական քաղաքականություն:

Մի շարք խնդիրներ են ծագում:

Առաջին. պարզ է, որ եթե ամեն անգամ թուրքերը այցելելով Մոսկվա, կամ հակառակը, վերարծարծում են մարտի 16-ի պայմանագրի հարցը, դա նշանակում է, որ այդ խնդիրը կա, հարցը գոյություն ունի:

Երկրորդ.. պատմությունը արդյոք կարո՞ղ է լինել փաստարկ քաղաքականության մեջ:

Ցավոք, ոչ:

Երրորդ... Մեր բոլոր քայլերը պետք է նպատակաուղղված լինեն կայսրությունից դուրս գալուն...

Չորրորդ... Եթե չեղյալ ենք հայտարարում այս պայմանագրերը, մենք հայտնվում ենք՝ միջազգային իրավունքի տեսակետից՝ պատերազմական վիճակում:

...Մենք ունե՞նք միջոցներ, որպեսզի կարողանանք գոնե մեկ շաբաթ դիմագրավել որեւէ հարձակման, եթե այդպիսին լինի, մինչեւ որ աշխարհը խառնվի այս գործին:

...Միայն անկախության ուղիներում մենք կարող ենք ձեռք բերել մեր անկախությունը:

Եկեք ուրեմն այնպես անենք, որ չվնասենք մեր անկախության գործընթացին»:

Կարիճ Սարդարյան. «Մեր խորհրդարանի մի քանի ամսյա պատմության մեջ արդեն երկրորդ անգամ է, որ խորհրդարանին պարտադրվում է արտաքինից թվացյալ հայրենասիրական, մեծ գրգիռներ ունեցող վեճ, բայց իրականում քաղաքական գծին խանգարող:

...Ոչ մի հայ չի կարող մոռանալ իր պատմական տարածքները...

...Պահանջատիրություն ասածը դատարկ բան է այսօր: Դա ձեռնտու է բոլոր այն ուժերին, որոնք դեմ են Հայաստանի անկախությանը:

...Մարդիկ կան, որոնք անցնելով նույնիսկ ՀՀՇ-ի սթափ քաղաքական դպրոցը, պնդում են, որ 21 թվի պայմանագիրը պիտի վերանայվի եւ այլն...

...Մեր ի՞նչ գործն է, թե Մոսկվան ու՞մ հետ է պայմանագիր ստորագրում, ի՞նչպես է ստորագրում...»

Ռուբեն Հակոբյան «...Սա նոր ձեւ չի: Հարցի էությունից հեռանալու համար կարելի է հարցը կամ հարցը բարձրացնողներին վարկաբեկել, տեղափոխել այլ հարթություն: Մենք կովեցինք տոտալիտար, միակուսակցական վարչակարգի դեմ, բայց, ցավոք, մենք ամբողջությամբ վարակված ենք նրանց թողած ավանդույթներով: ... Եկեք ազգային-ազատագրական այս պայքարը դասակարգային հարթության չտեղափոխենք, դա էլ դավաճանություն է:

Ես հիմնավորումներ չեմ տա...

...Ես չէի ցանկանա, որ այնպես դիտվեր, թե հայ հեղափոխական դաշնակցությունն այստեղ բարձրացրել է հարցը ինչ-որ «ավանտյուրաներով», ինչպես այստեղ ասվեց: Այդ հարցը չկա»:

Լևոն Տեր-Պետրոսյան. «...70 տարի տիյուրքի քաղաքական կուսակցությունների գործունեությունը ծառացած է եղել հիմնականում այս հարցի շուրջ, բայց մենք տեսանք այդ պայքարի արդյունքները...

...Խորապես գիտակցում ենք, որ մենք չենք յուրացրել, չենք տիրում այն հողը, որն այսօր կազմում է Հայաստանի հանրապետությունը գոյության երաշխիքի տեսակետից...

Չչափելով մեր ուժը, ձեռնոց նետել մեր բոլոր հարեւաններին՝ սա ես կգնահատեի որպես արկածախնդրություն եւ պատասխանատվության բացարձակ բացակայություն:

...Վաղը կարող է կրկնվել 18 թվականը: Դուք կարծում եք, որ մեր ստատուս-քվոն գիտի պահպանվի, եւ մենք հույսներս դրած փառապանծ կարմիր բանակի վրա, ապահով պիտի ապրե՞նք: Վաղը ռուսական զորքը կարող է հեռանալ Անդրկովկասից, եւ ոչ մեր կամքով, ոչ մեր պահանջով:

...Եվ դուք պետք է մեն-մենակ մնաք այս մեր շատ սիրած բարեկամների հետ: Ի՞նչ եք անելու այդ օրը:

Դուք, պարոն Ռուբեն Հակոբյան եւ մյուսներդ, անելու եք այն, ինչ արեցին մեր իսկապես նվիրված մարդիկ, որոնք կնքեցին այն չորս պայմանագրերը հինգ տարվա ընթացքում. Բաքում, Ալեքսանդրապոլ, Ղարս եւ Միութենական պայմանագիր: Դուք ստիպված կլինեք կնքելու ձեր ձեռքով:

Բայց կա իրականություն... Չի կարելի խաղալ ազգի ճակատագրի հետ...

Դուք ոչ մի դաշնակից չունեք...

Ես երբեք այդպիսի որոշում չեմ ստորագրի: Ես կպայքարեմ մինչեւ վերջ, թույլ չտալու համար այդպիսի արկածախնդրություն, որովհետեւ ես զգում եմ իմ պատասխանատվությունը:

Ես շատ լուրջ կպայքարեմ, եթե խորհրդարանին չհամոզեմ, ես ժողովրդին կդիմեմ: Եթե դուք 7 հազար ստորագրություն եք հավաքել՝ ես 500 հազար կհավաքեմ, մենք այդ փորձն ունենք, այնպես որ այս մեթոդներով չի կարելի մեզ վրա ճնշում գործադրել:

... Մի բան էլ շատ էժանագին կերպով այստեղ շահարկվեց՝ դա հեռագրերն են տիյուրքից: Վաղն եւեթ հաղորդեք արտաահմանի թերթերում, որ Փարիզում եւ Նյու-Յորքում նարինջ ուտող հայը իրավունք չունի մեզ քաղաքականություն թելադրել, որովհետեւ Ղարաբաղում եւ Հայաստանում ոչ թե փարիզեցին է զոհվում, այլ հայաստանցին, հայաստանցի երեխան է այստեղ սովից մեռնում...

...Աշխարհում ցանկացած պետության գոյություն երաշխավորված է առաջին հերթին իր հարեւանների հետ ունեցած հարաբերություններով:

Քանի որ սա մեր գոյության խնդրի հետ առնչվող հարց է, ես կողմ եմ, որ հայ-թուրքական հարցը քննարկվի խորհրդարանում: ...Մշակենք մոտեցում եւ այսուհետեւ թույլ չտանք այսպիսի տարերային ինքնագործունեություն:

...Եթե իմ խոսքը համոզեց պատգամավորներին, մի մասը կարող է հետ վերցնել իրենց դիմումները, եթե ոչ՝ մենք պետք է հարգենք մեր օրենքները եւ գումարենք նստաշրջան»:

Ինչպես տեղեկացանք Գերագույն Խորհրդի քարտուղարությունում, անցած օրվա դրությամբ մոտ 30 պատգամավոր հետ են վերցրել իրենց դիմումները, որ ներկայացրել էին արտաներք նստաշրջան գումարելու պահանջով՝ ռուս-թուրքական պայմանագրի վերանայման հարցը մտցնելով օրակարգի մեջ:

ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ

ՄԵՐ ՍԵՓԱԿԱՆ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Արցախի ժողովրդի պայքարը ուղղակի կամ քողարկված կերպով ազդել է կյանքի բոլոր ոլորտների վրա: Հետադարձ հայացք նետենք երկու-երեք տարվա փոփոխություններին եւ փորձենք գուշակել վաղվա օրը: Ուզում ենք ներկայացնել մարզի տարբեր բնագավառների վիճակագրությունը, հետեւությունը թողնելով մասնագետներին եւ շահագրգիռ ընթերցողին:

Ստորեւ ներկայացնում ենք 1987-90 թթ. Ստեփանակերտի նորաստեղծ ընտանիքների եւ նորածինների վիճակագրական պատկերը:

1987 - ամուսն. 520, ծնունդ - 1361, ամուսնալուծություն - 93

1988 - ամուսն. 380, ծնունդ - 1243, ամուսնալուծություն - 79

1989 - ամուսն. 378, ծնունդ - 1296, ամուսնալուծություն - 96

1990 - ամուսն. 388, ծնունդ - 1229, ամուսնալուծություն - 98

Նկատելի է թվերի որոշակի նվազում, այն դեպքում, երբ քաղաքային բնակչության թիվն ավելացել է Ադրբեջանից վերադարձած եւ քաղաքում հիմնավորված 10.000 հայերի հաշվին: Ավելացնենք նաեւ, որ 1989 թվականին 18 երեխա ծնվել են խեղդված, 1990 թվականին մանկական մահացությունը (մինչեւ 1 տարեկան) եւս աննախադեպ աճի է հասել (20 երեխա):

ԵՐԵՒԱՆ

ՀԱԲ-ի ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մարտի 14-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն դատարանի դատական կոլեգիան սկսել էր ՀԱԲ-ի գլխավոր հրամանատարի քաղաքական գծով տեղակալ Վարդան Վարդանյանի եւ ՀԱԲ-ի ջոկատի հրամանատար Մայիս Միրզոեւի գործերի քննությունը: Դատավարության ընթացքը անընդհատ կասեցվում է, օրինակ՝ մարտի 17-ի նիստը հետաձգվեց որովհետեւ վկաները խուսափում են դատարան ներկայանալ:

ԿԻՐՈՎԱԿԱՆ

ԻՆՉԻ՞Ց ՍԿՍՎԵՑ

Մարտի 18-ին «Արցախ» պուրակում ԱԻՄ-ի Կիրովականի «Նժդեհ» կազմակերպությունը միտինգ էր հրավիրել, որի հիմնական պահանջն էր ապատ արձակել քաղաքի մեկուսարանում գտնվող Վահան Մադաթյանին: Նա Իջեւանի ԱԻՄ-ի նախագահն է, ծառայել է Լենինականում 1989 թվականից: Երկու ամիս հետո 1990 թ. հունվարին սահմանամերձ շրջաններում ընդհարումների ժամանակ հրաժարվել է ծառայությունից՝ միանալով երկրապահ ջոկատներին: Դրանից հետո վերադարձել է Իջեւան՝ ստեղծելով ԱԻՄ-ի կազմակերպություն: Ջերբակալվել է մարտի 13-ի գիշերը ԱԻՄ-ի շտաբում, հաջորդ օրը տեղափոխվել Կիրովականի մեկուսարան: Ջերբակալումը պատճառաբանվում է նրանով, որ ինքնակամ լքել է բանակը: Մարտի 12-ի հանրահավաքից հետո, երբ կազմակերպվեց դեպի ՆԳ քաղբաժնի վարչական շենքը, իսկ այնուհետեւ դեպի բանտ: Նրանց պահանջն էր՝ ապատ արձակել Վ. Մադաթյանին, որը չի կանկայել ծառայել խորհրդային բանակում:

ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Հայտարարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Ցետ հայանավարութեան 70 տարուան բռնատիրութեան եւ մենատիրութեան, Հայաստանի Հանրապետութիւնը ազգային ազատագրական եւ ժողովրդավարական հզօր շարժումի մը ընդմէջէն, յայտարարեց իր ինքնիշխանութիւնը եւ սկսաւ անկախութեան գործընթացը: Պատմական այս յեղաշրջումով, հայ ժողովուրդը, առաջին անգամ ըլլալով կարելիութիւնը ունի վերագտնելու իր ազատութիւնը եւ օժտուելու գերիշխան պետութեամբ մը՝ միակ երաշխաւորը իր ազգային շահերուն եւ իրաւունքներուն:

Ժողովրդական ազատ արտայայտութենէն բխած օրինական կառավարութիւն մը գործի լծուած է վեց ամիսէ ի վեր, ջանալով մտցնել անհրաժեշտ բարեփոխութիւնները իսկական ժողովրդավարութեան եւ ազատ շուկայի հաստատման համար, միանգամայն զգուշութեամբ յառաջադիմելով հաստատակամօրէն դեպի անկախ պետութիւն:

Հայաստանի դիմագրաւած տնտեսական, ընկերային եւ քաղաքական ծանր պայմանները, Անդրկովկասի լարուած մթնոլորտին մէջ, ծայրահեղ դժուարութեան կը մատնեն կառավարութիւնը: Այսպէս՝ 1988-ի երկրաշարժի հետեւանքները, ինչպէս նաեւ Ղարաբաղի ժողովուրդի ինքնորոշման պայքարին ի պատասխան Ադրբեջանի պարտադրած շրջափակումը ծանրօրէն կը ճնշեն կառավարութեան քաղաքականութեան վրայ: Կարեւոր հարցեր են նաեւ բնապահպանման աղէտալի վիճակն ու քաղաքական, տնտեսական, ընկերային եւ մշակութային լճացում յառաջացնող ամլացած կառույցներու բարեփոխումը: Այս բոլորին կ'աւելնայ Մոսկուայի բանեցուցած ճնշումի խստացման սպառնալիքը, որ կրնայ Խ. Միութեան ժողովրդավարացման բոլոր յոյսերը ոչընչացնել:

Այս բազմաթիւ կարիքներու եւ դժուարութեանց դիմաց, սփիւռքահայութիւնը խորապէս կը ձգտի օգնել Հայաստանին որպէսզի ան կարենայ յաղթահարել այս ծանրը պարտաւորութիւնները:

Այս պատասխանատուութիւնը ստանձնելու կոչուած, Հայաստանի հետ Համագործակցութեան Կազմակերպութիւնն ստեղծուած է Ֆրանսայի մէջ, նպատակ ունենալով համախմբել բոլոր պատրաստակամութիւնները, ի նպաստ նոր Հայաստանի կերտումին: Հ.Հ.Կ.-ի առաքելութիւնն է՝ նեցուկ հանդիսանալ կառավարութեան եւ Հայաստանի մէջ գործող ժողովրդավարական ուժերուն, քաղաքական, տնտեսական եւ գիտական մարզերուն մէջ, զօրաշարժի ենթարկելով ներքին եւ արտաքին բոլոր կարողութիւնները, նպաստելու համար երկրին վերականգնման եւ 1990 Օգոստոս 23-ի հռչակագրին յայտնած անկախութեան եւ ժողովրդավարութեան սկզբունքներու գործադրման:

Փարիզ, Փետրուար 1991

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝

Աբքարեան Վարուժան, Անթապյեան Միհրան, Այտապիրեան Ռոպէր, Գետենեան Գեղամ, Գուլումճեան Արմէն, Մարտիրոսեան Իշխան, Մուրատեան Քլէր, Մուրատեան Վահէ, Շեխիկեան Զապէլ, Ոսկերիչեան Լէոնթին, Պետիկեան Իզապէլ, Տէր-Եղիայեան Մուշեղ, Տէր-Մինասեան Անահիտ, Տէր-Մինասեան Լեւոն, Քիւրքճեան Ռոտրիկ:

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հովհաննես Հ. Սարգիսյան (հետմահու). *«Կրոնքը եւ անոր դերը»*, Բեյրութ, 1990:

Նուբար Ակիշյան, *«Փախուստը»*, վեպ, Լոս Անջելես, 1990:

Վարուժան Պետիկյան (հետմահու), *«Կենսարբեցում»*, բանաստեղծությունների ժողովածու, 122 էջ, Կալիֆորնիա, 1990:

Աշուղ եւ կեմանչիստ Ռուբեն, *«Հուշեր»*, Կանադա, 1990:

Գեւորգ Քեշիշյան, *«Նիկոսյա»*, Նիկոսյա քաղաքի մասին երկասիրություն, (անգլերեն), Նիկոսյա, 1990:

Քլեր Մուրադյան, *«Ստալինեն մինչեւ Գորբաչով՝ խորհրդային հանրապետության մը պատմությունը - Հայաստան»*, Փարիզ, 1990, 475 էջ (ֆրանս.):

Թորոս Թորանյան, *«Արքո Ջաղմաղջյան արուեստագետը»*, Բեյրութ, 1990, 72 էջ:

Արշավիր Մ. Վ. Գաբուշյան, *«Պատմություն Մերիոս Եպիսկոպոսի»*, ներածություն, թարգմանություն եւ ծանոթագրություններ, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության տպարան, Անթիլիաս, 1990:

Թորգոմ եպս. Գուշակյան *«Խրիմյան հայրիկ»*, Բ տպագրություն (ծննդյան 170-ամյակի առիթով), Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության տպարան, Անթիլիաս, 1990:

Մուշեղ Իշխան, *«Իրիկնալույս ռումբերու տակ»*, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության տպարան, Անթիլիաս, 1991:

Թորոս Թորանյան, *«Ծանչնանք Վրաստանն ու վրաց ժողովուրդը»*, 1991, Բեյրութ:

Խ. ՄԻՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՏՈՐՈՆՏՈՅՈՒՄ

Տորոնտոյի Ցորք համալսարանի դահլիճներում փետրվար 19-22 օրերին տեղի է ունեցել Խ. Միության գիտաժողով, որին մասնակցել են Կանադայից, ԱՄՆ-ից, Եւրոպայից եւ Խ. Միությունից ժամանած գիտնականներ ու մասնագետներ: Չորս օրերի ընթացքում զեկուցումներ են ներկայացվել քաղաքական, մշակութային, տնտեսական ու բնապահպանական հարցերի շուրջը: Գիտաժողովին իր աջակցությունն է բերել Հայ դատի Կանադայի հանձնախումբը: Գիտաժողովին հրավիրվել են նաեւ Ելենա Բոններն ու Ցուրի Բարսեղովը: Գիտաժողովում Սան Ֆրանցիսկոյից Հրայր Բալյանը ներկայացրել է *«Ազգությունների տագնապը Խ. Միությունում»*, Հայաստանից Թաքուլ Մանասերյանը *«Հայաստանի տընտեսական վիճակը եւ արտադրական կարողությունները»*, Ռուբեն Ինջիկյանը *«Ռուբլիի դրամափոխությունը համաշխարհային շուկայի վրա»*, Բագրատ Էդիլյանը *«Հրապարակայնությունը եւ էթնիկ ազգային գործոնի դերը քաղաքական մշակույթում»* ուսումնասիրությունները: Տիկին Բոններն ու Ց. Բարսեղովը գիտաժողովում ու մամուլի հետ հանդիպումներում անդրադարձել են Արցախի խնդրին ու շեշտել արցախահայության ինքնորոշման իրավունքը:

Այս առթիվ Հայ դատի Տորոնտոյի հանձնախումբն ու ՀՀԴ «Սողոմոն Թեհլերյան» միությունը պատվել են Ե. Բոններին ու Ց. Բարսեղովին: Հյուրասիրությանը ներկա է եղել նաեւ Երեւանի համալսարանի օգնական դասախոս Բագրատ Էդիլյանը, որը Խ. Միության գիտաժողովին մասնակցող պատվիրակությանը մաս էր կազմում:

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՏԵՆԱՊԵՏ ԷԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ

Լիբանանի Հայոց առաջնորդ Արամ արք. Քեշիշյանը Կանբերայում գումարված եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր համաժողովում ընտրվեց եկեղեցիների համաշխարհային կենտրոնական ու գործադիր վարչությունների ատենապետ:

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի վարչության մեջ առաջին անգամն է օրթոդոքս եկեղեցու ներկայացուցիչը ընտրվում բարձրագույն այս պաշտոնում:

Տեղին է հիշել, որ համաժողովի աշխատանքներին իրենց մասնակցությունն էին բերում Ամենայն Հայոց Կաթողիկոսության եւ Կիլիկիո Աթոռի միաբանները:

Բեյրութում լույս տեսնող «Զարթօնք» օրաթերթից իմանում ենք, որ մարտի 8-ին, Լիբանանում Խ. Միության դեսպան Գենադի Իլիչեւը Հայաստանի խորհրդարանի ու կառավարության անունից հատուկ շքանշան է հանձնել Լիբանանի հայոց առաջնորդ Արամ արք. Քեշիշյանին՝ 1988 թ-ին երկրաշարժի առիթով լիբանանահայության նվիրաբերած կարեւոր օժանդակության առիթով:

Շքանշանի տվչության արարողությունը տեղի է ունեցել Բուրջ Համուդի ազգային առաջնորդարանում: Ներկա են եղել Լիբանանի կառավարության հայ անդամներ, խորհրդարանի պատգամավորներ, հայկական երիք կուսակցությունների ներկայացուցիչներ, խորհրդային դեսպանության հայ պաշտոնյաներ:

ՏԵՂԱԿԱՆ

ԿԻՐՈՎԱԿԱՆ

ՆՈՐ ՖԱԲՐԻԿԱ ԻՍՊԱՆԱԿԱՆ ՀՈՍՔԱԳԾՈՎ

Անցյալ տարվա օգոստոսից Թեժ լեռան ստորոտում սկսվել է Կիրովականի մորթուն մուշտակի նոր ֆաբրիկայի շինարարությունը: Այն նախատեսված է 600 աշխատողների համար: Թիվ 606 շինվարչությունն արդեն ավարտել է 4 գլխավոր մասնաշենքերի հիմնային աշխատանքները, մոնտաժվում են մետաղյա կառուցվածքները: Չնայած ֆաբրիկան շահագործման կհանձնվի 2 տարի հետո, արդեն բանակցություններ են վարվում իսպանական «Կալդեվիլա» ֆիրմայի հետ, որը համաձայնվել է 5,5 միլիոնով ժամանակակից պահանջներին համապատասխանող հոսքագիծ վաճառել նոր ֆաբրիկային: Ի նկատի ունենալով, որ գործ ունի աղետի գոտու հետ, ֆիրման այդ գումարը իջեցրել է 1 մլն. եւ պարտավորվել ֆաբրիկայի շահագործումից հետո մասնագետներ ուղղարկել հոսքագծի մոնտաժման համար: Նոր հոսքագծով հնարավոր կլինի մշակել ավելի քան 600 հազար ոչխարի բարձրորակ մորթի, որը կառաքվի միութենական հանրապետություններ եւ արտասահման: Հին ֆաբրիկան նույնպես վերակառուցելուց հետո կօգտագործվի: Այնտեղ կարտադրվեն ավելի բարձրորակ մորթիներ:

ՔԱՂԱՔԸ ՎԵՐԱԳՏՆՈՒՄ Է ԻՐ ՏԵՍՔԸ

Բոլոր դժվարություններով հանդերձ շարունակվում է վերականգնել Կիրովականը, վերագտնել իր դեմքը: Այս տարի քաղաքի բնակելի շինարարության կապիտալ ներդրումները կկազմեն 123 միլիոն 734 հազար ռուբլի, կոմունալ-կենցաղային շինարարությունը՝ 36 միլիոն 258 հազար, ժողկրթությանը՝ 29 միլիոն 537 հազար, առողջապահությանը՝ 6 միլիոն 20 հազար: Շենքերի եւ շինարարությունների ամրացման համար կծախսվի 1 մլն. 133 հազար ռուբլի: Այս տարի բնակեցման կհանձնվի 162 հազար 969 քառակուսի մետր տարածություն: Առաջին երկու ամսում շահագործման է ընդունվել 16360 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով 219 բնակարան: Մարտ ամսում կհանձնվի եւս 127 բնակարան 9580 քառակուսի մետր մակերեսով:

1989 թ. մինչեւ հիմա քաղաքում բնակեցման է հանձնվել մոտ 156 հազար քառակուսի մետր մակերեսով 2148 բնակարան:

Օր օրի քաղաքը վերագտնում է իր դեմքը:

ԳՈՒԳԱՐՔ

ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԽԾՎՈՒՄ Է

Հայաստան է ժամանել 4 հոգուց բաղկացած Ֆրանսիայի հրշեջների պատվիրակությունը գնդապետ Սերժ Կոլզինի ղեկավարությամբ, որոնք մասնակցել են երկրաշարժից հետո փրկարար աշխատանքներին: Նրանց նպատակն է ստուգայցերի միջոցով պարզել, թե ինչպես է բաշխվում Ֆրանսիայից որպես օգնություն ստացած 600 տոննա կաթի փոշին եւ 60 տոննա մանկական սնունդը: Պատվիրակությունը եղավ Գուգարքի Շահումյանի անվան դպրոցում, շրջկոմսոմոլում, նրանց հատկապես հետաքրքրում էր դպրոցականներին տրվող կաթի քանակաբաժինը, իսկ որակը եւ խոհությունը որոշելու համար իրենց հետ բերել էին հատուկ չափող սարքավորումներ: Այցելությունից գոհ մնացին եւ գուգարքցիները, եւ ֆրանսիացի մեր բարեկամները:

Մեկ. թղթ. ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ

Սփյուռքահայ լուրեր

▬ ՓԱՐԻԶՈՒՄ փետրվարի 10-ին համերգ է տվել սփյուռքահայ հայտնի մեներգչուհի Աստղիկ Տետեյանը: Ֆրանսիական, ռուսական ու հայկական հայտագրով կոտտո դահլիճում կայացած համերգին ներկա են եղել մեծ թվով երաժշտասերներ:

▬ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ կազմակերպվել է հայազգի մեծատաղանդ նկարիչ Արշիլ Գորկու գործերի ցուցահանդես: Ցուցահանդեսը շրջելու է Մարսել, Սենտ-Էտիեն, Ֆրանկֆուրտ եւ Բրեմեն քաղաքները:

▬ ԲՐԱՈՒՆՇՎԱՅԳՈՒՄ (Գերմանիա) փետրվարի 9-ին Հանոու-Արաքս գերմանահայկական բարեկամության միությունը կազմակերպել է իր հերթական բանախոսությունը, որի ընթացքում Էնո Մայերը խոսել է *«Գերմանահայկական հարաբերությունները պատմության հոլովույթում»* նյութի շուրջը:

▬ ՄԱՐՍԵԼՈՒՄ Սրբոց Թարգմանչաց մայր եկեղեցում մարտի 10-ին տեղի է ունեցել հոգեհանգստյան արարողություն երջանկահիշատակ Շնորհք պատրիարքի մահվան տարելիցի առիթով:

▬ ՎԱՆՔՈՒՎԵՐԻ հայ կենտրոնի սրահում փետրվարի 17-ին տեղի է ունեցել *«Արցախյան պահանջատիրություն»* զորակցական հանդիսություն:

▬ ՎԱԼԱՆՍԻ Հայ մշակույթի տան կազմակերպությամբ փետրվարի 22-ին տեղի է ունեցել Մովսես Պչաքչյանի *«Տիեզերակները պիտի չսարսափին խրտվիլակներէն»* գրքի ներկայացման երեկո:

▬ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ մամուլում հրապարակվել է *«Արտագին կոչ հայության»*ը, որում անուազանգ է հնչեցվում 1749 թ. Լիբանանի Զմմառ գյուղում գտնվող հայ կաթողիկե համայնքի վանատան ճակատագրի կապակցությամբ: Կոչում հանգանակիչ հանձնախումբը հայությանը հորդորում է Լիբանանի քաղաքացիական պատերազմի պատճառով վանատան տնտեսական սուր տագնապը հաղթահարելու համար անմիջական օգնություն ցուցաբերելու:

▬ ԲՈՄՈՆՈՒՄ (Ֆրանսիա) փետրվարի 10-ին տեղի Կտպույտ Խաչ կազմակերպության «Նաիրի» մասնաճյուղը Հովհաննես Շիրազ թատերախմբի մասնակցությամբ ներկայացրել է Շիրվանզադեի «Զար ոգի» թատերգությունը:

▬ ՄՈՆՐԵԱԼՈՒՄ հունվարի 20-ին հանդես է եկել Պոլսահայ միության «Շիրակ» պարախումբը՝ ղեկավարությամբ Ռուդոլֆ Խաչադյանի:

▬ ՖԵՐԻԳՅՈՒՂՈՒՄ (Պոլիս) հունվարի 27-ին հանդիսավորապես նշվել է Թրքահայ ուսուցչած հիմնարկի 25-ամյակը: Կրոնական արարողության ավարտին տեղի է ունեցել հոգեճաշ նախագահությամբ Գարեգին արք. Գազանջյանի:

▬ ՏՈՐՈՆՏՈՅՈՒՄ հունվարի 25-ին հանդիպում է տեղի ունեցել անգլիական եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի պատվիրակ Զան Դենիս եպս.-ի եւ Տորոնտոյի Արեւելյան եկեղեցիների ներկայացուցիչների միջեւ, որին մասնակցել է Խաժակ վրդ. Հակոբյանը ու Տիգրան սարկավագ Գուլումջյանը: Հանդիպմանը արծարծվել են միջեկեղեցական հարցեր:

▬ ԼԻՈՆՈՒՄ 1988 թ. հիմնված Տիգրան եւ Հռիփսիմե Փափազյան ամենօրյա վարժարանն իր երրորդ տարեշրջանում ունեցել է 50 աշակերտ: Լիոնի Սբ. Հակոբ մայր եկեղեցու բակում գտնվող վարժարանն ունի մանկապարտեզի ու նախակրթարանի բաժիններ:

▬ ԹԵՀՐԱՆՈՒՄ հունվարի 24-ին ու 25-ին «Հ. Թումանյան» սրահում տեղի է ունեցել Զարմահալի հայ ուսանողական միության մանկապատանեկան երգչախմբի տարեկան համերգը՝ Արփի Սիմրոջյանի խմբավարությամբ:

▬ ՏՈՐՈՆՏՈՅՈՒՄ հունվարի 27-ին ՀՕՄ-ի կազմակերպությամբ տեղի է ունեցել դասախոսական երեկո, որի ընթացքում Սոնա Զեյթլյանը խոսել է *«Հայ կնոջ դերը ՀՀԴ-ի մեջ»* թեմայով:

▬ ԱՆԹԻԼԻԱՍԻ Կաթողիկոսարանում փետրվարի 7-ին հանդիսավոր կերպով ոգեկոչվել է Վարդանանց հիշատակը: Պատարագել ու քարոզել է Զարեհ եպս. Ազնավուրյանը:

▬ ՏՈՐՈՆՏՈՅՈՒՄ փետրվարի 3-ին «Ալեք Մանուկյան» մշակութային կենտրոնում տեղի է ունեցել «Մ. Սահակյան» արտասանական մրցույթ՝ տեղի վարժարանների 30 աշակերտների մասնակցությամբ:

digitised by A.R.A.R.@

Հարցազրույց Հայաստանի վարչապետի Ա. տեղակալ ՀՐԱՆՏ ԲԱԳՐԱՏԵԱՆԻ հետ

Փետրվարի 21-23-ին Լոս Անջելեսում գումարված Ամերիկահայ ճարտարագետների ու գիտնականների ընկերակցության գիտաժողովին իր մասնակցությունն էր բերել նաեւ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը:

Ստորեւ ներկայացնում ենք պատվիրակության անդամներից՝ ՀՀ վարչապետի առաջին տեղակալ Հրանտ Բագրատյանի ՌԱԿ-ի արեւելյան Ամերիկայի պաշտոնաթերթ «ՆՈՐ ՕՐ» եռօրյայի խմբագիր Հ. Պողոսյանի հետ ունեցած հարցազրույցը:

ՀԱՐՑՈՒՄ.- Հայաստանը կը գտնուի տնտեսական շրջափակման մէջ: Զմրան այս օրերուն, Ռուսաստանէն եկող գազատարին ծորակները փակուած են Ադրբեջանի մէջ... Ընդհանրապէս խօսք կայ բնական գազը բերել Վրաստանի վրայով, ամբողջացնելէ ետք քանի մը քիլոմէթր խողովակներու տեղադրումը: Ո՞ւր հասաւ այս ծրագիրը: Ի՞նչ են դժուարութիւնները: Այս հարցումը ես ուղղեցի նաեւ պրն. Եւայի Մտեփանեանին, որ ձեզ մատնացոյց ըրաւ որպէս հարցին ծանօթ մասնագէտի:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Հարցը մի քիչ աւելի լուրջ է քան գազամուղ կառուցելը: Մարտ-ապրիլ ամիսներին, Վրաստանի կառավարութեան խօսքերով, թոյլ կը տրուի գազամուղի շինարարութիւնը շարունակել: Գազամուղի գոյութեամբ շահագրգռուած է Վրաստանը, որ այսօր լուրջ էներգետիկ ճգնաժամ է ապրում ինչպէս Հայաստանը, մասնաւորապէս գազ չգնելու կամ քիչ լինելու պատճառաւ: Բայց այդ գազամուղի առկայութեան պայմաններում անգամ, այսօրուայ պրոբլեմը գազի քիչ տրանալն է: Մեզ մօտ դա երկու պատճառաւ է պայմանաւորուած: Առաջին՝ Ռուսաստանի գազային ռեսուրսները, կազի պաշարները, քիչ են եւ Ռուսաստանը չի կարողանում բաւարարել պահանջները, երկրորդը, այդ ռեսուրսները ուզում է հանրապետութիւններին վաճառել համաշխարհային գներով: Ի հարկէ, Վրաստանի գազամուղի շինարարութեամբ մի քիչ կը թեթեւանան Հայաստանի էներգետիկ դժուարութիւնները:

Հ.- Հայաստանի Հանրապետութիւնը դէպի Իրան կատարա՞ծ է որեւէ նախաձեռնութիւն՝ տնտեսական յարաբերութիւններու գծով:

Պ.- Առաջին պաշտօնական քայլերն են առնում: Իրանի կառավարութիւնը համաձայնութիւն տուել է,- ճիշդ է, ո՛չ Հայաստանի, այլ՝ խորհրդային կառավարութեանը,- որ կամուրջ կառուցուի Ագարակի մօտ: Սկզբից ի վեր Իրանը պնդում է, որ գործ ունենայ միմիայն Խ. Միութեան հետ, ո՛չ առանձին հանրապետութիւնների: Մէկ անգամ չէ, որ Իրանի բարձր խաւերում արտայայտուել են Հայաստանի հետ սերտ կապեր ունենալու անհրաժեշտութեան մասին: Սկզբունքային պայմանաւորուածութիւնը կայ Ագարակի մօտ կամուրջ շինելու, թէեւ դէպի Իրան այդ ճամբան, գոնէ սկզբնական շրջանում, չի կարող ազդել հանրապետութեան հաղորդակցութեան միջոցների վրայ: Որովհետեւ, միեւնոյն է, գալով մինչեւ Մեղրի, այնտեղից մենք հաղորդակցութիւն չունենք Հայաստանի տարածքով դէպի Երեւան եւ հիւսիս: Սկսում ենք Մեղրի-Քաջարան թունելի շինարարութիւնից,- չնայած տնտեսական ծանր իրավիճակին,- եւ ծրագիր է մշակուել դէպի հարաւ կառուցելու ճանապարհներ եւ աստիճանաբար, 10 տարի ետք, մենք կ՚ունենանք հաղորդակցութեան միջոցներ ամբողջ Հայաստանի տարածքով:

Որպէսզի այն է, որ Արաքսի այն ափից Իրանը ճանապարհ է կառուցում եւ մենք բաւական հեշտութեամբ կարող ենք հասնել մինչեւ այդ երկրի խորքերը՝ առեւտրական կապեր հաստատելու համար:

Հ.- Դուք ՀՀՇ-ի անդա՞մ էք:

Պ.- Այո, ես ՀՀՇ-ի վարչութեան անդամ եմ:

Հ.- Արտասահմանեան քաղաքական որոշ կազմակերպութիւններ, ինչպէս նաեւ Հայաստանի մէջ քանի մը խումբեր, ՀՀՇ-ն կ՚ամբաստանեն, որ վարչարարական նոյն եղանակով կը գործէ, ինչպէս նախկին իշխանութիւնը:

Պ.- Տեսակէտը սխալ է: Կառավարութիւնը իր բնոյթով, գործունէութեամբ չէզոք է ընդհանրապէս: Ես կարող եմ վկայել կառավարութեան մէջ նշանակուած, պաշտօնի կոչուած անձանց, օրինակ, կոմունիստները աւելի շատ են այնտեղ: Մենք աշխատում ենք քիչ թէ շատ մասնագէտներին ներգրաւել գործի մէջ:

Պէտք է քննադատաբար նկատել, եւ Հայաստանի ներսում, եւ սփիւռքում, որ կան քաղաքական ուժեր,- գուցէ սա մեր ազգի բնաւորութեան, գործելակերպի եղանակ է,- որոնք քննադատում են ամէն մի կառավարութիւն, ամէն մի իշխանութիւն: Ի հարկէ հեշտ է քննադատել:

Պէտք է նկատի ունենալ, թէ իշխանութիւնը, Գերագոյն խորհուրդը, կառավարութիւնը, եւ այսօրուայ, եւ վաղուայ,- որովհետեւ տեղի կ՚ունենան ընտրութիւնները,- եթէ ընտրուած են, հաշուետու են ժողովրդին: Նրանց շուրջ պէտք է համախմբում կատարուի, անկախ քաղաքական հայեացքներից, մանաւանդ որ Հայաստանի համար միակ խնդիրը տնտեսական հարցն է:

Քննադատութեանը ես դրական եմ վերաբերւում: Բայց, չեմ կարող ընդունել այն, որ ենթական եթէ քննադատում է կառավարութիւնը,- մէկ կողմ թողնենք սուբյեկտիւ քննադատութիւնը,- այդ քննադատութեան նպատակը պէտք է լինի այնպէս, որ համախմբում կատարուի կառավարութեան շուրջը:

Հ.- Այժմ կոչեր կը լսուին Խորհրդարանի անկարողութեան մասին, տեղի կ՚ունենան ցոյցեր, պահանջելով նախագահական ընտրութիւն եւ նոյնիսկ ԱԻՄ-ի մէկ հաղորդագրութեան մէջ Խորհրդարանը որակուած է «թլպատուած» խորհրդարան: Ի՞նչ է ձեր կարծիքը:

Պ.- Նա, նոյն ԱԻՄ-ը, որի ներկայացուցիչներին մենք օգնել ենք,- ես նկատի ունեմ ՀՀՇ-ն,- խորհրդարանի անդամ դառնալու, չգիտես ինչու, խորհրդարանում ոչ մի շինիչ առաջարկութեամբ հանդէս չեն գալիս:

Երկրորդը, պէտք է հասկանալ՝ այլ բան է կառավարութիւնը՝ որը օր ու գիշեր պէտք է մտածի 3,5 միլիոնի գոյութեան մասին եւ այլ բան է՝ «փոլիթիքան»ութիւնը:

Երրորդը, վերջին հաշուով, ես գիտեմ, թէ ով ինչի է ընդունակ Հայաստանի ապագայ բարիքի համար եւ չեմ պատկերացնում քաղաքական լուրջ գործիչի, որը այս պահին տասնապատիկ հաշուենկատ չի:

Այնուհետեւ, պիտի ասեմ, որ ԱԻՄի նըման կազմակերպութեան,- կշիռը չգիտեմ ինչ է,- առկայութիւնը օրինաչափ երեւոյթ է:

Հ.- Ձեր կառավարութիւնը ծրագիր ունի սփիւռքահայութեան տալու քաղաքացիական իրաւունք: Հնարաւո՞ր է այդ ծրագիրը իրագործել՝ մնալով Խ. Միութեան կազմին մէջ:

Պ.- Դա պէտք է կարգաւորուի քաղաքացիական հարցի օրէնքով, որը Գերագոյն խորհուրդի գործն է: Նա է պատասխանատու, քաղաքացիութեան մասին օրէնքով: Խանգարում է մի բան, որ տարբեր երկրներ, քաղաքացիութեան տարբեր օրէնքներ ունեն:

Օրէնքը հիմա ուսումնասիրում է, բայց միանգամից նման օրէնք ընդունել չի կարելի: Հարցը պարզապէս մշակում է: Սփիւռքահայութիւնը պակաս իրաւունքներ չունի դրա փոխարէն:

Հ.- Այս պայմաններու տակ կարելի՞ է քաղաքացիութիւն տալ սփիւռքահայերուն եւ միաժամանակ զանոնք դարձնել խորհրդային քաղաքացիներ:

Պ.- Ես այստեղ իմ անձնական կարծիքն եմ արտայայտում: Գտնում եմ որ՝ այո՛: Որովհետեւ ասեմ, թէ մենք ինչպէ՞ս ենք աշխատում խորհրդարանում: Ընդունում ենք մեր օրէնքները, մեր որոշումները, քաջ իմանալով, որ նրանցից մի զգալի մասը հակասութեան մէջ է Խ. Միութեան օրէնքների հետ: Մենք պէտք է մտածենք վաղուայ օրուայ մասին: Այսօր նրանք հակասութիւններ են, բայց օրէ-օր մենք սկսում ենք աշխատել:

Երէկ չէ միւս օրը, Մոսկուայում, կեդրոնական կառավարութիւնում, լուրջ խօսակցութիւններ ունեցայ մասնաւորապէս հողի սեփականութեան մասին եւ ասացի որ չընայած Մոսկուայում արգելուած է, միեւնոյն է, մենք կ՚իրագործենք այդ: Մենք ունենք սեփական տնտեսական քաղաքականութիւն: Մենք պէտք է հասնենք ազատ շուկայական տնտեսութեան: Մասնաւոր գիւղացին ապրանք արտադրելուց յետոյ, ազատօրէն պէտք է կարողանայ վաճառել: Եւ ասացինք, որ անկախ իրենց օրէնքներից, մենք կիրառելու ենք մեր օրէնքները: Այնտեղ որտեղ հակասութիւնների մէջ ենք, չենք շեշտում դրանք, մի տեսակ «աւանդարդում» չյայտնելու մտադրութեամբ, սպասելով որ ինչպէս կ՚ընթանան քաղաքական իրադրութիւնները: Դրա համար որոշ օրէնքներ հիմա ծիծաղելի են թւում: Կեանքը պայքար է եւ չպէտք է մտածել, որ ամէն ինչ հալած իւղի նման է:

Հարցազրույցը վարեց՝
ՅԱԿՈԲ ՊՕՂՈՍԵԱՆ
«ՆՈՐ ՕՐ», 27 փետրուար

ԴԵՖԻՑԻՏԻ ԵՐԵՔ ԵՐԵՒՈՒՅԹ

ՊԱՎԵԼ ԲՈՒՆԻՉ

Շատ բան չի բավականացնում: Հիմնականում սենդամթերք, որը երբեք էլ չի ըստացվի, եթե գյուղին չտանք լայն սպառման ապրանքներ, պարարտանյութ, տեխնիկա...

Արդեն զգացվում է էներգիայի, կերոսինի, բենզինի պակաս: Սովորույթ են դառնում ծխախոտի համար խրոնիկական հերթերը, թեւե ֆաբրիկաների խոստացված վերանորոգումը վաղուց արդեն պէտք է վերջանար: Իսպառ անհետացել են սափրվելու լեզվակները ու մածուկները, մեխերը, վագոնները, աղյուսները, կոշկեղենն ու կահույքը: Ավտոմեքենաների մասին չարժե խոսել, քանզի առաջներում էլ դրանք չկային: Վաճառասեղանների դատարկությունը աչք է ծակում, սառեցնում: Բայց մարդիկ ապրում են եւ տվից չեն մահանում: Մեզ համար եւ մեր կյանքը իմացող արտասահմանցիների համար ոչ մի զարմանալի բան չկա: Վերջին տարիներին մի շարք սպառողական ապրանքների արտադրությունն ընկել է, թեեւ դա դեռ աղետ չէ, բայց, մասնավորաբար, 1990 թվականին կոշկի արտադրությունը ընկել է 0,8 տոկոսով, կտորինը՝ 0,9 տոկոսով, պանրինը՝ 2 տոկոսով, մսինը՝ 3 տոկոսով: Վիճակագրության համաձայն ամբողջությամբ «Բ» խմբի արտադրությունն անգամ աճել է, օրինակ, նույն 1990 թվականին՝ 4,4 տոկոսով: Դրան դժվար է հավատալ: Սակայն արդեն առաջին իսկ մասնակի պակասությունները նեռաառում են դեֆիցիտի օրենքները, որոնք իրենց գործողությունները փոխանցում են մնացած ապրանքներին:

Առաջարկվածի պահանջի ավելցուկը ելքը փնտրում է կիրառման նոր բնագավառներում, որը հանում է բարձր դրամային ճնշումը: Դեֆիցիտի լայն ընդգրկումը կընդգծվի է նրա ներսի ընդարձակմամբ: Եթե որեւէ ապրանք չի բավականացնում 1 տոկոսով, ապա այն գնում են 2-10 անգամ ավելի: Լավ է, որ ժողովուրդը քիչ սառնարաններ ունի, այլապես ավելի քիչ միս, կաթ, պանիր, կարագ կմընար: Բնակարանները, պատշգամբները, ամառանոցները, ավտոտնակները վերածվել են պահեստների: Եվ ամեն ինչ քիչ է: Սպառման բնագավառում ապրանքների նրման վերակուտակումը դեֆիցիտի առաջին ֆենոմենն է:

Դեֆիցիտը առեւտուրը դարձրեց ամենաշահավետ բնագավառը: Մեզ միայն թվում է, թե ցածր գների դեպքում ժողովուրդը շահում է: Իրականում նրան շատ քիչ է բաժին ընկնում: Մեծ մասը բռնագրավվում են վերագնորդները եւ վաճառում մի քանի անգամ անգամներով: Դրա համար դեֆիցիտը ինչ-որ ժամանակ պէտք է պահվի, պահեստավորվի առեւտրում, քանի որ նրան հետեւում են չբռնաքաշված վագոնները, ծովային նավատորմը եւ այլն: Դեֆիցիտի երկրորդ ֆենոմենը առեւտրի պահված գերնորմատիվային պաշարներն են: Դրանք մեծ են, բայց սպառման բնագավառից քիչ են: Ամենամեծ պահեստավորված պաշարները արտադրության բնագավառում են: Դրանք ստեղծվում են շահավետ գործարքների, շարաշահության, գների բարձրացման համար եւ գոյություն ունեն մի քանի՝ հումքի, նյութերի, պատրաստի արտադրանքի, չբռնաքաշված հզորությունների եւ ազատ բանվորական ուժի ձեւով: Դա էլ հենց դեֆիցիտի երրորդ եւ գլխավոր ֆենոմենն է: Հատկապես մեծ են հզորությունների պահեստավորված պաշարները: Բավական է ասել, որ 1991 թվականի պայմանագրերը կնքվել են դրանց 79 տոկոսի չափով: Գյուղատնտեսության մեջ գերակշռում են արտադրանքի պաշարները: Եթե անցած տարիներին դրանց թաքցնում էին գյուղացիները եւ ունեզրկման խմբերը կոչվում էին մթերաջոկատներ, ապա այժմ պահեստավորումը կատարվում է բոլոր ճյուղերում, եւ դրանց վրա անհաջող գրոհում են հսկիչները, քարոզիչները, պետական պաշտոնյաները եւ պատգամավորները:

Բոլոր պաշարները գումարելով, մենք համոզվում ենք, որ կարծես թե չենք աղքատացել: Մի՞թե դա հնարավոր էր արտադրության մի փոքր նվազեցումից եւ գույքի նկատմամբ խայտառակ վերաբերմունքից: Բայց, մյուս կողմից, եթե հաշվենք միջոցների պոտենցիալ հզորությունը, հաշվի առնենք, որ լավ ժամանակներում էլ դրանք ամբողջ ուժով չէին օգտագործվում, որ աշխատանքի գործիքների փոխանակման գործակիցը 1,3-ից չի բարձրանում, ապա խորհրդային տնտեսության առկա հնարավորությունները պէտք է գնահատել չափազանց նշանակալի: Իսկ մարդի՞կ: Դրանք նույն որակավորումն ու նույն բավարար առողջությունն ունեն: Ինչ վերաբերում է օգտակար հանածոներին, ապա ԽՍՀՄ-ին հավասարը չկա: Հողերը նույնպես: Անգամ նորմալ շահագործման դեպքում ամենատարբեր հողերն իսկ, փառք Աստծո, հերիքում են: Իսկ ինչու՞մն է բանը: Ինչու՞ արտադրության համար անհրաժեշտ եւ բավականաչափ այդ ամբողջությունը չի միանում, պտուղ չի տալիս:

Որովհետեւ մեռած է աշխատանքի նրկատմամբ մարդու հետաքրքրությունը՝ միակ նյարդը, որը տնտեսության շարժիչը շարժման մեջ է դնում: Եվ այդ է մեր հիմնական դեֆիցիտը, որը կանխորոշում է մնացածները: Կհաղթահարենք դա, կհետաքրքրենք մարդկանց աշխատել՝ կստանանք եւ՛ սենդամթերք, եւ՛ հագուստ, եւ՛ բնակարան, եւ՛ նավթ, եւ ամեն ինչ: Կապրենք ուրիշներից ոչ պակաս:



ԺԱՂՐԱՆԿԻՉԸ՝ ԱՐԱՍԻ

digitised by A.R.A.R.@

թղթածրար

Հայ-թուրքական հարաբերություններ

ԱՌԵՒՏՈՒՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԵՏ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

ՄՈՒՐԱԴ ՄՈՒՐԱԴՅԱՆ, ԱՄՆ-ի բանակի նախկին գնդապետ, այժմ դասախոս եւ միջազգային հարաբերությունների գծով խորհրդատու

1918 թվականին ստեղծված Հայաստանի Հանրապետության փլուզման կարեւոր պատճառներից մեկը՝ անմիջական հարեւանների հետ փոխադարձ համաձայնության գալու նրա անկարողությունն էր: Ուստի միեւնույն սխալի կրկնությունը պահանջել այժմ Լեւոն Տեր-Պետրոսյանից կամ վերածնված Հայաստանից՝ նույքան աղետաբեր կարող է լինել:

Դեպքերն արագորեն են զարգանում: Հավանական է, որ Հայաստանն ինքն իր մասին ավելի վաղ պարտավորված լինի հոգալու, քան ցանկալի է: Այն պետք է պատասխանատու լինի նաեւ իր անվտանգության համար: Ակտիվ թշնամու պատկերի (մի կողմից 57 միլիոնանոց ուժեղ Թուրքիան, մյուս կողմից մոտ 8 միլիոնանոց Ադրբեջանը) երկար պահպանումը անցանկալի հետեւանքներ է խոստանում:

Հայաստանի աշխարհագրական դիրքն այնպիսին է, որ կամա թե ակամա նրան ավանդական թշնամի երկրների հետ է կապում: Հայերից շատերն այս կամ այն ձեւով առընչվում են Թուրքիայի կամ Ադրբեջանի հետ: Պատմականորեն, Վրաստանին եւս չի կարելի բարեկամ երկիր համարել: Այն այժմ ընթանում է առավելապես ազգայնամոլական ճանապարհով եւ եթե ազգայնամոլներն անցնեն իշխանության գլուխ եւ սկսեն իրագործել իրենց ծրագրերը, ապա հայերին այնտեղից դուրս վտարումը կդառնա շոշափելի փաստ: Ուստի անմտություն է ենթադրել, թե ծով դուրս գալու հնարավորությունից եւ բնական հարստություններից զուրկ, 3,3 միլիոն բնակչություն ունեցող փոքրիկ Հայաստանը՝ իր աղքատիկ գյուղատնտեսությամբ եւ էներգետիկ ճգնաժամով, խուսափի կամ զգուշանա Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու հնարավոր առաջին քայլը կատարելուց:

Աշխարհաքաղաքական պայմանները այդպիսի բանակցությունները պարզապես հրամայական են դարձնում, իսկ առեւտուրը հիանալի հենակետ կարելի է համարել: Եւ ինչքան շուտ՝ այնքան լավ: Հայաստանը մեծապես տուժել է կոմունիստական հասարակարգի տնտեսական սնանկացումից եւ ժողովուրդը հիմա չի կարող երկար ըսպասել օգտվելու համար նորափիթ «անկախության» պտուղներից: Մարդիկ սնվել են ուզում:

Զգացմունքային դիրքերից ելնելով, ըստիյուքահայությունը պնդում է, որ նորաթուխ Հայաստանը պարտավոր է հետամուտ լինել ցեղասպանության հարցին, պահանջելով «վերանորոգությունների հարուցում եւ գրավյալ տարածքների վերադարձ»: Սակայն չմոռանանք, որ երբ հռոմեացիները իրենց նվիրվածությունն ապացուցելու համար կառչեցին իրենց պահանջներից, նրանք պարտվեցին ու նահատակվեցին: Մինչդեռ Հայաստանը պետք է գոյատեւի:

Ամերիկյան կոնգրեսում Թուրքիայի վարկը վերջերս մի անգամ եւս բարձրացավ շնորհիվ Պարսից ծոցի ճգնաժամի: Ցեղասպանության օգտին արված մի որոշում կարող էր բախտի բերումով քվեարկության դրվել, մինչեւ Սադդամ Հուսեյնի հարցը լուծվեր: Սակայն հայերն իրականությանը պետք է նայեն սթափ աչքերով: Թուրքիան շատ ավելի պիտանի է աշխարհի հզոր պետություններին՝ քան Հայաստանը, որը դեռ չի էլ ճանաչված որպես ինքնուրույն պետություն: Իրավիճակը հար եւ նման է 1918 թվականի սկզբնական շրջանին:

Թուրքիան այսօր 1 միլիոնի հասնող բանակ ունի եւ, իհարկե, վայելում է Ամերիկայի հովանավորությունը: Այնպես որ, ի՞նչ դրդապատճառներ կարող է ունենալ Թուրքիան, որպեսզի տարածքային կամ որեւէ այլ զիջում կատարի Հայաստանին: Նույնիսկ եթե Ամերիկան չեզոք դիրք բռնի, ոչ մի երկիր աշխարհում չի կարող ստիպել թուրքերին, որ այդպիսի քայլի դիմեն: Ամեն մի զիջում Թուրքիայի կողմից պետք է ձեռք բերվի միայն ու միայն դիվանագիտական եղանակով, իսկ դրան չի կարելի հասնել «Թուրքիայի հետ ոչ մի գործարք» սկզբունքը հանգերգելով:

Հայաստանը հնարավորություն չունի այդքան երկար սպասելու մինչեւ բոլոր «կարեւոր հարցերը» լուծվեն երկու կողմերի միջեւ:

Նախ նշենք, որ Թուրքիայի հետ առեւտրական հարաբերություններ սկսելը բոլորովին չի նշանակում նրանից կախյալ վիճակում լինել, քանի որ նա պարզապես դառնալու է մեկը այն բազմաթիվ երկրներից, որոնց հետ առեւտրական համաձայնագրեր են ստորագրվել: Տեր-Պետրոսյանի կառավարությունը արդեն սկիզբ է դրել այդ գործընթացին:

Երկրորդ, նույնիսկ տասնյակ առեւտրական գործընկերների առկայության դեպքում, Հայաստանը կարիք ունի ծովային դարպասների: Իսկ դրանց մեջ նվազագույն ծախսերի հետ կապված ճանապարհն անցնում է Թուրքիայի տարածքով: Հայաստանը այժմ բանակցություններ է վարում Վրաստանի հետ երկաթուղային նոր գիծ բացելու ուղղությամբ:

Եթե պատմական թշնամիների,- Թուրքիայի եւ Ադրբեջանի,- հետ ունեցած մեր տարակարծությունները հարթելը համարվում է անխոհեմ քայլ, ապա նույնքան անխոհեմ չէ՞, միթե, Վրաստանի հետ բանակցելը: Չէ՞ որ Վրաստանը նույնպես հայերի անխոնջ պաշտպանը չէ: Վրացի ազգայնականները բավականին քմահաճ են: Իշխա-

շարունակությունը՝ 6-րդ էջում

Մեր նախորդ համարներից մեկում («Ազգ», 20 փետրվարի, 1991, թիվ 2) բանալով հայ-թուրքական հարաբերությունների թղթածրարը, ներկայացրել էինք թուրքական մամուլում վերջին շրջանում արտահայտված կարծիքներից չորսը՝ Ջոշքուն Քըրջայի, Թահա Աքյոլի, Մեհմեդ Ալի Բիրանդի հոդվածներն ու «Թերջուման» թերթի առաջնորդողը, հատկապես՝ նախարար Ե. Ստեփանյանի եւ փոխնախարար Ա. Եղիազարյանի հայտարարությունների լույսի ներքո:

Շարունակելով նույն թղթադարի նյութերի հրապարակումը, մեր ներկա համարում ներկայացնում ենք երկու հոդված, որոնք արտահայտում են դրական կեցվածք՝ ինչ վերաբերում է հայ-թուրք հարաբերությունների սերտացմանը:

Անշուշտ, այս մասին Հայաստանում թե արտերկրում եղել են ու պիտի լինեն հակադիր կարծիքներ, որոնցից քաղվածքներ կհրատարակենք մեր առաջիկա համարներից մեկում, դարձյալ նույն թղթածրարի նյութերի շարքում:

ԻՐԱՏԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱԿՈԲ ՕԱՔԻՆՅԱՆ, թուրքագետ

1990 թ. հունվարին Ադրբեջանի կողմից իրագործված հայկական ջարդերից հետո, երբ դեպքերի զարգացման ընթացքը Մոսկվայի համար անցանկալի բնույթ էր ընդունել, խորհրդային ղեկավարությունը Բաքու զորք մտցնելու մասին որոշում կայացրեց, դա պատճառաբանելով հայ բնակչության կյանքն ապահովելու անհրաժեշտությամբ: Սա Մոսկվայի կողմից արված ակնհայտ կեղծիք էր, որին մեկ այլ կեղծիքով պատասխանեց չարանենգ մարդասպանը: Սակայն, արյունոտ ելույթներին «անկախության պայքարի» տեսք տալու ադրբեջանական փորձերը նպատակին չհասան: Արեւմուտքը բացահայտորեն հանդես եկավ Բաքու զորք մտցնելու օգտին, իսկ թուրքական կառավարությունը բավականացավ իրադարձությունների առնչությամբ լոկ իր անհանգստությունն արտահայտելով:

Թուրքիայի կառավարող շրջանները քաջ գիտեին, թե ինչ են իրենցից ներկայացնում Ադրբեջանի «անկախության» ջղաձգումները, եւ պատահական չէ, որ նրանք 1990 թ. հունվարին Նախիջեւանի Ինքնավար հանրապետության Գերագույն խորհրդի կողմից «Թուրքիային միանալու» վերաբերյալ ընդունված որոշումով անգամ չհրապուրվեցին:

Առաջին հայացքից գուցե տարօրինակ թվա, բայց այդ օրերին Թուրքիայում մտահոգություն էր առաջացրել ոչ այնքան Ադրբեջանի, որքան՝ Հայաստանի անկախության հնարավորությունը: Տեսեք, թե այդ առթիվ ինչ էր գրում «Ջումհուրիյեթ» թերթի թղթակից Իլհան Սելչուկը. *«Եղբայրական Ադրբեջանի անկախացումը սքանչելի մի նպատակ է, սակայն նման նպատակադրումը ինքնին ենթադրում է աջակցել նաեւ Հայաստանի անկախությանը: Եթե դա տեղի ունեցավ, ապա Թուրքիան կհայտնվի Հունաստան-Հայաստան փակագծի արանքում: Գաղտնիք չէ, որ այս երկու երկրները հողային պահանջներ ունեն Անատոլիայում: Իսկ ի՞նչ էր լինելու Իսրայելի «անվտանգության գոտում» ընդգրկված Թուրքիայի վիճակը: Արդյոք Թուրքիան չի՞ ընկնի «սատանայական եռանկյունու մեջ», որի մի անկյունը կզբաղեցնի Հունաստանը, իսկ մյուս երկու անկյունները՝ Արեւմուտքի բնութագրմամբ՝ «ցեղասպանության ենթարկված» հայերն ու հրեաները: Արկածախնդիր է նա, ով կարծում է, թե նման իրավիճակում հնարավոր կլինի ապավինել պանիսլամիզմին կամ պանթուրքիզմին»:*

Հայաստանի անկախության հետ կապված Իլհան Սելչուկի մտահոգությունները մասնակիորեն բաժանում էր նաեւ Թուրքիայի արտաքին գործոց նախարար Մեսութ Ցըլմազը: Այդ նույն օրերին թուրքական հեռուստատեսությամբ նա ասում էր հետեւյալը. *«Աստված մի արասցե՝ Խորհրդային Միությունը քայքայվի»:* Նրա կարծիքով Թուրքիայի համար նախընտրելի է Խորհրդային Միության նման հզոր հարեւանը՝ կայուն քաղաքական կարգավիճակով, քան մի քանի փոքրիկ հանրապետություններ:

Իլհան Սելչուկի, ինչպես նաեւ Մեսութ Ցըլմազի ասածներից պարզ երեւում է, որ Թուրքիան այնքան էլ շահագրգռված չէ «դեմ-հանդիման» տեսնել անկախ Հայաստանը: Սակայն ժողովրդավարական շարժումների հետագա զարգացումը ԽՍՀՄ-ում ցույց տվեց, որ միութենական հանրապետությունների անկախությունը դառնում է իրողություն, մոտ ապագայի խնդիր: Նորընտիր խորհրդարանի կողմից ընդունվեց հայտնի հռչակագիրը: Դրան հետեւեց նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հայտարարությունն այն մասին, թե *«Հայաստանի Հանրապետությունը պետք է քաղաքակիրթ երկրներին վայել հարաբերություններ ստեղծի բոլոր հարեւանների հետ անխտիր, այդ թվում՝ նաեւ Թուրքիայի»:*

Ցնցված Ադրբեջանի, Թուրքմենիայի, ըստ «Միլլիյեթի» նաեւ Վրաստանի ճիգերին, որոնք Անկարային նախազգուշացրել էին՝ *«չընկնել հայերի ծուղակը», «չնպաստել տնտեսապես հզոր Հայաստանի ստեղծմանը»,* որն ապագայում *«վտանգ կներկայացնի թուրքական տարրի համար»,* Լեւոն Տեր-Պետրոսյանի նախաձեռնությունը դրական արձագանք գտավ: Պրեզիդենտ Թուրգուտ Օզալն արտահայտվեց հայ-թուրքական հարաբերությունների ստեղծման օգտին, հայտարարելով, որ *«Թուրքիան կարող է Հայաստանի հետ սահմանափակ տնտեսական համագործակցություն սկսել»:* Դեռ ավելին, Հայաստանի եւ Թուրքիայի համագործակցության շուրջ խորհրդային հանրապետություններում առաջացած դժգոհությունների վերաբերյալ Մ. Ա. Բիրանդի հարցին Թ. Օզալը հեռուստատեսությամբ բառացիորեն պատասխանեց. *«Մենք նրանց խոսք կհասկացնենք»:* Այդ հայտարարությունով Թուրքիան նախ հաշվի էր նստում Հայաստանի Հանրապետության գոյության փաստի հետ (մինչ այդ մեր սահմանը քաղաքական միտումներով դիտվում էր զուտ խորհրդա-թուրքական եւ դա հատուկ շեշտվում), եւ ապա՝ ցույց էր տալիս Հայաստանի կարեւորությունը իր արտաքին քաղաքական ծրագրերում, լուրջ ուշադրության չարժանացնելով միութենական վերոհիշյալ հանրապետությունների քմահաճ «նախազգուշացումները»:

Պրեզիդենտ Թ. Օզալի հայտարարությունից հետո հայ-թուրքական առեւտրատնտեսական հարաբերությունների սկզբնավորման համար ստեղծվեցին նախադրյալներ: Հարցը քննարկվեց Թուրքիայի արտգործնախարարությունում: Այնուհետեւ երեւան ժամանեց թուրքական մի պատվիրակություն, որը հանդես եկավ գործնական առաջարկություններով:

Այսպիսով, Թուրքիան ընդառաջ գնաց Հայաստանի Հանրապետության նախաձեռնությանը՝ կապեր հաստատել պետական մակարդակով: Սակայն այդ ուղղությամբ արված քերեւս ոչ էական քայլերը երկուստեք ավելորդ շահարկումների տեղիք տվեցին: Պարզ բան է, որ Թուրքիան տվյալ դեպքում հետապնդում է ոչ այքան տնտեսական, որքան քաղաքական նպատակներ: Հայաստանի տեղը նրա արտաքին առեւտրի ընդհանուր ծավալի մեջ միեւնույն է, կլինի աննշան: Իսկ ինչ վերաբերում է Թուրքիայի նպատակներին, դրանք կարելի ամփոփել հետեւյալ կերպ. Խորհրդային Միության մեջ անընդհատ շրջափակումների ենթարկվող Հայաստանի հետ առեւտրատնտեսական կապեր հաստատելով՝ շահել համաշխարհային հասարակայնության համակրանքը, հասնել Հայ դատի ու Մեծ եղեռնի միջազգային ճանաչման ուղղությամբ տարվող աշխատանքների զոնե ժամանակավոր սառեցմանը եւ Հայաստանի Հանրապետության միջոցով փորձել ազդել ստյուռքահայության հետագա գործունեության վրա:

Թուրքիայի հետ փոխհարաբերությունների հարցը, անկախ նրա հետապնդած նպատակներից, մի օր անպայման անխուսափելի-

շարունակությունը՝ 6-րդ էջում

digitised by A.R.A.R.@

ԿԱՆԽԱԳՈՒՇԱԿՈՒՄ. ՄԵՐ ԿՅԱՆՔԸ ԳՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Ն. Ժելեզնովա, «Արգումենտի ի Ֆակտի»

Ինչպիսի՞ գներ են մեզ սպասում:

Առաջին խմբի ապրանքների գները, որոնք կազմում են «սպառողական զամբյուղը», կաճեն 2-3 անգամ եւ խստորեն կհաստատվեն կառավարության կողմից: Փոխհատուցումը կվերաբերի միայն այս զամբյուղին, որը կընդգրկի ապրանքների եւ ծառայությունների 296 տեսակներ:

Փոխհատուցում. Բոլոր աշխատողները կստանան ամսական 60 ռուբլի, թոշակառուները՝ 65 ռուբլի, իսկ երեխաները՝ 40 ռուբլի (չհաշված մանկական ապրանքների գների աճման փոխհատուցման գումարը):

Որքա՞ն կկազմի փոխհատուցման բաժինը, որը բնակչությունը կստանա գների բարձրացումից հետո: Վարչապետը ասում է 85 տոկոս, պրեզիդենտը՝ 100: Ո՞վ է ընդունում խորամանկում:

Պարզվում է ոչ ոք: Վարչապետը ասում է այն բաժնի մասին, որը կստեղծվի «սպառողական զամբյուղի» գների բարձրացումից եւ անմիջապես կվերադարձվի բնակչությանը, իսկ պրեզիդենտը նկատի ունի, որ ամբողջը կվերադարձվի, սակայն նոր գներից առաջացած եկամուտների 15 տոկոսը բաժին կընկնի տեղական խորհուրդներին եւ կօգտագործվի իրենց հայեցողությամբ:

Փոխհատուցման աղբյուրները. Դրանք հիմնականում այն ձեռնարկությունների ըստ պառման ֆոնդերն են, որտեղ աշխատում է ընտանիքի մեծը կամ անդամը:

Ձեռնարկությունն իրավունք կունենա՞ ավելի մեծ չափերի փոխհատուցում, քան այն նախատեսված է կառավարության կողմից:

Շատ հնարավոր է. եթե ձեռնարկությունը ունի ֆինանսական հնարավորություն եւ, եթե աշխատանքային կոլեկտիվը ընդունի համապատասխան որոշում:

Ապրուստի համար անհրաժեշտ նվազագույնը. Հիմա այդ նվազագույնը, որ մինչ այժմ հավասար էր 70 ռուբլու, կաճի գրեթե երկու անգամ: Եւ ձեռնարկությունն առանց իր աշխատողի ծանրաբեռնվածությունը հաշվի առնելու, պարտավոր է նրան վճարել այդ գումարից ոչ պակաս (135 -140 ռ.)

Աշխատանքի վարձատրումը. Գների աճը առաջ է բերում աշխատանքի վարձատրման ռեֆորմ: Ինչպես մեզ հայտնի դարձավ, համապատասխան գերատեսչությունները նախապատրաստում են որոշում, որը հանում է սպառման ֆոնդերի ձեւավորման սահմանափակումները եւ զգալիորեն ընդլայնում է կոլեկտիվի իրավունքները խրախուսանքի, լրացուցիչ վճարումների եւ հավելումների վերաբերյալ:

Ինչպե՞ս են ձեւավորվել ապրանքների գները «սպառողական զամբյուղից» դուրս:

Երկրորդ խմբի մեջ մտնող ավելի քանկ ապրանքները կվաճառվեն ամենաբարձր գներով, որոնք կհաստատվեն կառավարության կողմից ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հետ համաձայնեցումից հետո: Այդ մակարդակից ավելի գների բարձրացումն արգելվում է:

Երրորդ խմբի մեջ մտնող ամենաթանկ ապրանքները (թանկարժեք մետաղները, ավտոմեքենաները, բարձր կարգի ռադիոտեխնիկան, բոլոր ժամանակակից արտասահմանյան ապրանքները) կիրացվեն ազատ գներով:

Երկրորդ եւ երրորդ խմբի ապրանքների գների աճը փոխհատուցման ենթակա չի լինելու: Դա նշանակում է, որ բնակչության կարիքավոր խավերը կպաշտպանվեն գների ռեֆորմից, իսկ հիմնական հարվածը կբաժանվի միջին եւ բարձր եկամուտներ ունեցող ընտանիքներին:

Ավանդները. Հիմա ամեն ոք հնարավորություն կունենա խնայդրամարկղում ունեցած իր հաշվից վերցնել 500 ռուբլուց ավելի: Որպես հակաօրինական չեղյալ են հայտարարվում անձնագրերում արվող նշումները: Պատրաստվում է ավանդների ինդեքսացիա, որի հետեւանքով, հավանաբար, նրանք կավելանան «սպառողական զամբյուղի» գների բարձրացման գումարի չափով:

Կշարունակվի՞ արդյոք դրամական ռեֆորմը:

Կառավարությունը պնդում է, որ «դա այլեւս չի լինի»: Բայց ըստ ոչ պաշտոնական տվյալների՝ հնարավոր է, որ դրամական շրջանառության մեջ բաց թողնվեն 500 եւ 1000 ռուբլիանոց արժեթղթեր:

«ԱԻՖ» N°11

ՃՈՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ՝ ԹՎԵՐՈՎ

Պարսից ծոցի պատերազմին մասնակցած դաշնակից 30 երկրների զավմաճակատ առաքած զորքերի (ցամաքային ուժեր, օդուժ եւ ծովուժ) ընդհանուր թիվը կազմել է 750.000 մարդ, որոնց դիմաց Իրաքը կենտրոնացրել է 500.000 հոգի, որոնցից 110.000-ը՝ «Հանրապետական պահակագնդի» զինվորներ: Դաշնակից բանակից անմիջապես զավմական գործողություններին մասնակցածների թիվը կազմել է 600.000 մարդ, որոնցից 400.000-ը՝ ամերիկացիներ, 60.000-ը՝ սաուդցիներ, 30 000-ը՝ ծոցի էմիրություններից, 36 000-ը՝ եգիպտացիներ, 20.000-ը՝ սիրիացիներ, 29.000-ը՝ բրիտանացիներ եւ 12.000-ը՝ ֆրանսիացիներ:

42 օր տեւած պատերազմի ընթացքում, որից ընդամենը 100 ժամը՝ ցամաքային գործողություններ, դաշնակիցները կատարել են 106.000 օդարշավ, Քուվեյթի եւ Իրաքի վրա թափելով 60.000 տոննա ռումբ: Այդ ռմբակոծություններից մահացած կամ վիրավորված իրաքցիների թիվը անորոշ է մնում: Սակայն, ըստ որոշ գնահատումների, սպանված զինվորների ու քաղաքացիների թիվը տատանվում է 50.000-ից 150.000-ի միջեւ:

Ամերիկացիներն ունեցել են 115 սպանված եւ 330 վիրավոր, մինչ արաբական ուժերը՝ 40 սպանված եւ մի հարյուրյակ վիրավոր, բրիտանացիները՝ 36 սպանված եւ 43 վիրավոր, իսկ ֆրանսիացիները՝ 2 սպանված եւ 27 վիրավոր:

Դաշնակիցներին հաջողվել է գերի վերցնել 60.000 իրաքցիների, շարքից դուրս հանել 42 դիվիզիաներից 40-ին, ինչպես նաեւ 4.280 զավմակաթերից 3.000-ը, 2.870 զրահապատ կաթներից 1.856-ը, եւ 3.110 թնդանոթներից 2.140-ը:

Մյուս կողմից, զավմական գործողությունների ընթացքում իրաքյան 500 օդանավերից կործանվել են 97-ը, իսկ 147 ինքնաթիռ ապաստանել Իրանում: Շարքից դուրս են եկել դաշնակից 36 ինքնաթիռ, որոնցից 24-ը՝ ամերիկյան եւ 7-ը՝ բրիտանական:

Պատերազմի ավարտին, նավթի միջազգային սակարանների վրա մեկ տակառն արժե մոտավորապես 18 դոլլար, հունվար ամսին 40 տոկոս անկում կրելուց հետո: Ինչ վերաբերում է միջազգային բորսային, հունվարի 17-ից փետրվարի 28-ը այն արձանագրել է 20 տոկոսի հավելում Փարիզում, 19 տոկոսի՝ Լոնդոնում, 18 տոկոսի՝ Տոկիոյում եւ 15 տոկոսի՝ Նյու Յորքում:

Քաղված «Լը Մոնդ»ի 13 մարտի, 1991 համարից

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԱԿԱՐԱՆ



Նյու Յորքի օտար դրամանիշների լումայափոխման կենտրոնում, սույն թվի մարտի 14-ի տվյալներով, գրանցվել են հետեւյալ արժեքները: Փոխանակումը լինում է բանկերի միջեւ 1 միլիոն դոլլարի եւ ավելիի արժեչափերով:

	= ԱՄՆ $	ԱՄՆ $ =
Անգլիական փաունդ	1.848	0.5411
Ավստրալ. դոլլար	0.768	1.30035
Գերմանական մարկ	0.63425	1.5766
Թուրքական լիրա	0.0002918	3427.01
Իտալական լիրա	0.0008484	1178.625
Լիբանանյան լիրա	0.001034	967
Կանադական դոլլար	0.86675	1.1537
Հունական դրախմա	0.00588	170.075
Ճապոնական յեն	0.007368	135.725
Շվեյցարական ֆրանկ	0.73125	1.3675
Սաուդյան ռիյալ	0.26667	3.75
Իսպանական պեսետա	0.0101965	98.075
Ֆինական մարկ	0.265	3.7725
Ֆրանսիական ֆրանկ	0.186115	5.3731

Հայաստանի Հանրապետությունում, սակարանի չգոյության պատճառով (սակայն ուսումնասիրելի եւ հնարավոր) «սեւ շուկայում» 1 ԱՄՆ դոլլարի համարժեքն է 32...33 խորհրդային ռուբլի:

Առեւտուրը Թուրքիայի հետ անհրաժեշտ է Հայաստանին

շարունակություն 5-րդ էջից

նության գլուխ անցնելով, նրանք կարող են վտարել իրենց երկրից բոլոր այլազգիներին: Այնպես որ Վրաստանի երկաթուղային ճանապարհով դեպի արտաքին աշխարհը դուրս գալու Հայաստանի հույսերը նույնպես խաբուսիկ են:

Երկաթուղային մեկ այլ տարբերակ՝ Իրանի վրայով Պարսից ծոց դուրս գալն է: Բայց մահմեդական ֆունդամենտալիստները մեկ օրից մյուսը կարող են խզել հարաբերությունները քրիստոնյա ազգերի հետ: Այնպես որ Իրանը նույնպես անհուսալի է:

Այսպիսով, պարզվում է, որ յուրաքանչյուր տարբերակ էլ վտանգավոր է: Սակայն, հանուն Հայաստանի բարգավաճման՝ ամեն հնարավորություն պետք է օգտագործվի:

Չորրորդ, Թուրքիայի հետ առեւտրական հարաբերությունների մշակումը անպայմանորեն զիջումներ չի պահանջում Հայաստանի կողից: Հասուն տերությունները սովորաբար համաձայնության են գալիս՝ որոշ հարցերում իրար հետ չհամաձայնելով: Հայաստանն ու Թուրքիան նույնպես կարող են մշակել համագործակցության մի տարբերակ, համաձայն որի կողմերը կպարտավորվեն պաշտոնական, քաղաքական շրջանակներում որոշ հարցեր չբարձրացնել: Սա բոլորովին չի բացառում, որ Հայաստանը շարունակի ցեղասպանության եւ հարակից այլ հարցերի քննարկումը՝ ակադեմիական ոլորտներում կամ կառավարական փաստաթղթերով մղի գաղափարական պայքար: Այստեղ հարցին տարբեր տեսանկյունից մոտենալու գաղափարն է առաջ գալիս: Անմիջապես որ հայերը կարողանան ակադեմիական ոլորտներում որոշակի, սկզբունքային հաղթանակներ արձանագրել եւ համոզել մի քանի թուրք մտավորականների դրանց ճշմարտության մեջ, թրքական քաղաքական հակամարտությունը ինքնաբերաբար սպառելու է իրեն:

Հինգերորդ՝ առեւտրական պայմանագրերը քարացած պատվիրաններ չեն: Կողմերից յուրաքանչյուրը կարող է չեղյալ համարել դրանք, պատճառաբանելով նշված հոդվածներից որեւէ մեկի անկատարելիությունը:

Վեցերորդ՝ ԱՄՆ-ի կոնգրեսի անդամ Ջիմ Մուդին արդեն երկար տարիներ մաս է կազմում այսպես կոչված «Թուրքիայի Ամերիկայի բարեկամները» ընկերությանը եւ նա հաջողությամբ պայքարում է ցեղասպանության որոշման դեմ: Կոնգրեսում Թուրքիայի ազդեցությունը մի քանի անգամ գերազանցում է Ամերիկայի պրեզիդենտի այդ մասին կատարած ակնարկներից: Բուշի կողմից Թուրքիայի որակելը որպես «Ամերիկայի անխոնջ դաշնակիցը» բավական է, որ Մուդի նմանները «վախեցնեն» այն մարդկանց, որոնք ժամանակ առ ժամանակ զորավիգ են կանգնում հայերին:

Լեւոն Տեր-Պետրոսյանը լիովին հասկանում եւ ճիշտ է գնահատում այն վտանգները, որոնք առկա են միայնակ Հայաստանի առաջընթացի ճանապարհին: Չմոռանալով, որ ցեղասպանությանը զոհ գնացին 1.6 միլիոն հայեր, նշենք, որ Թուրքիայի հետ հարաբերություններ մշակելու հարցում որեւէ զգացմունքային մոտեցում կարող է նշանակել այդ ցեղասպանության շարունակություն:

Մինչդեռ հարեւանների հետ համաձայնության գալը եւ ճարպիկ փոխզիջումներով գործակցելը նրանց հետ, մեր կարծիքով, խելամիտ ու շահեկան քայլ կլինի Հայաստանի համար իր անկախ պետականության ստեղծման ճանապարհին:

«Արմենյան Ինքներնեշրնել Մեցրզին»
Հունվար, 1991

Իրատես քաղաքականություն

շարունակություն 5-րդ էջից

լի էր դառնալու: Խնամքով թաքնվելով Մոսկվայի ետեւում եւ սուր ճոճելով չենք նպաստի մեր ազգային խնդիրների լուծմանը: Դրանք լուծելու ենք մենք՝ ինքներս:

Տնտեսական ճգնաժամը հաղթահարելու համար այսօր Հայաստանին անհրաժեշտ է ուղղակի կապեր հաստատել Արեւմուտքի հետ: Դա մենք դեռեւս չենք կարող իրագործել Իրանի տարածքով: Ինչ վերաբերում է Վրաստանին, առանց խորանալու վրացական կառավարության հայկական դիրքորոշման մեջ, ասենք, որ լինելով ծովափնյա երկիր, ինքը խիստ կարիք ունի նման կապերի: Արեւմուտքի հետ բազմակողմանի հարաբերություններ ունեցող Թուրքիան Եւրոպա դուրս գալու մեր ամենակարճ ճանապարհն է:

Պարզորոշ ասենք, որ հայ-թուրքական համագործակցությունը մեզ համար նոր երեւույթ չէ: Անցած տարիների ընթացքում միմյանց հետ առեւտուր է արվել՝ թեկուզ եւ սահմանափակ քանակով: Արվեստի թուրք գործիչներ, այնուամենայնիվ, ժամանել են Հայաստան եւ Երեւանում հանդես եկել համերգներով: Մոտ տասը տարի առաջ թուրքերի հետ համատեղ կառուցվել է Ախուրյանի ջրամբարը, որի ջրերը միասին է օգտագործվում: Բայց քանի որ այդ բոլորը կատարվում էր խորհրդա-թուրքական հարաբերությունների շրջանակներում, հետեւաբար դժգոհելու մասին չէինք մտածում:

Անկախության ուղին բռնած Հայաստանը ձգտում է ուղղակի կապեր հաստատել արտաքին աշխարհի հետ: Առնվազն տարօրինակ է մտածել, որ մնացած բոլոր երկրների հետ վարելու ենք ինքնուրույն արտաքին քաղաքականություն, իսկ Թուրքիայի դեպքում դիմելու ենք Մոսկվայի միջնորդությանը: Չմոռանանք, որ տասնյակ տարիներ Մոսկվան Հայ դատի մասին խոսելն անգամ արգելում էր. Հայաստանը զրկված էր ցեղասպանության զոհերի հիշատակը հարգելու իրավունքից: Վերջին երեք տարվա իրադարձությունները մեկ անգամ եւս համոզեցին, որ Մոսկվան մեր ժողովրդի նկատմամբ ունի անսահմանափակ իրավունքներ, իսկ պարտականություն՝ ոչ մեկ: Հետեւաբար, հանուն Մոսկվայի քաղաքական սուր ճոճելու փոխարեն, հարկ է մտածել Թուրքիայի նկատմամբ իրատես եւ լուրջ քաղաքականություն մշակելու մասին: Ազգի շահերը դա են պահանջում:

digitised by A.R.A.R.@

«Ասում են, թե արվեստը հայրենիք չունի: Այս ճշմարիտ է, սակայն ամեն հայրենիք իր արվեստն ունի. ամեն մի ժողովուրդ ունի իր սեփական, իր ուրույն արվեստը: Հայ ժողովուրդն ունի իր ուրույն արվեստը՝ գրականություն, նկարչություն, երգ, ճարտարապետություն, բազմադարյան եւ մեծ արժեքներ, եւ իր պատվավոր տեղը հին եւ նոր ժողովուրդների արվեստների մեջ»:

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

«ՇԻՐԱԿԸ» ԴԱՐՁՅԱԼ ՄԵՋ ՀԵՏ Է

Բեյրութում լույս տեսնող «Շիրակ» ամսագիրը դժվարին ու հերոսական ուղի է անցել իր գրական մշակների եւ անխոնջ, արժանահիշատակ խմբագիր Օննիկ Սարգսյանի հետ՝ անա չորրորդ տասնամյակը թիկունք ու պաշտպան լինելով մայրենի լեզվին ու դպրոցին, գիտությանը, մշակույթին ու գրականությանը, ոսկե կամուրջի դեր կատարելով սփյուռքի եւ հայրենիքի միջեւ, հավատարմորեն, իրապես հետեւելով մի ժողովուրդ եւ մի գրականություն ազգային վսեմ կարգախոսին: Լիբանանյան երկարամյա պատերազմը եւ շարունակվող ընդհարումները երբեմն ընդհատում էին նրա գոյությունը, սակայն նա միշտ ուռքի էր ելնում՝ դարձյալ խոսելու իր ժողովրդի հետ:

Օրերս բավականին երկար ընդմիջումից հետո, կրկին հայրենիք հասան «Շիրակի» նոր հատորները՝ իր համար արդեն ավանդական կորուստների ու տրտմության, բայց եւ լույսի ու հույսի շողերով: Նա չի հուսահատվում, այլ շարունակում է մաքառել, որ նրա գոյատեւության, թվում է, գլխավոր եւ զորեղ ազդակն է:

1989 թ. նոյեմբեր-դեկտեմբերի միացյալ համարում տպագրված են Անդրանիկ Անդրեասյանի «Հայոց պատմության լացը» գիտապատմական ակնարկը, Գ. Խանենցի, Գ. Աճեմյանի, Պ. Սիմոնյանի, Ա. Դարյանի ստեղծագործությունները, Օննիկ Սարգսյանի «Ջաղճատել, անեղծ պահել մայրենին» եւ «Մեր լեզուն կատակի չի գար» ուշագրավ մտորումները, Ս. Տեր-Ներսեսյանի «Ուշ շրջանի բյուզանդական կայսրությունը» ուսումնասիրությունը, Թ. Թորանյանի «Հողի եւ հատուցման երգիչը»՝ Ալեք Գլճյանի 90-ամյակի առթիվ եւ ուրիշ արժեքավոր նյութեր: Խմբագրությունն ամեն ինչ արել է՝ հանդես գալու բազմազան եւ կարեւոր ասելիքով:

1990 թ. անդրանիկ հատորն ամբողջովին նվիրված է տաղանդաշատ գրող Արմեն Դարյանին, որի մահը մեծ կորուստ էր ժամանակակից հայ գեղարվեստական արձակի համար:

Հեղինակների անուններով, նյութի բազմազանությամբ, գրական ժանրերով հարուստ եւ հետաքրքիր է նաեւ 1990 թ. մարտ-մայիս ամիսների համարը, որը ինչպես եւ նախորդը, նոր խմբագրի՝ մատենագետ Ժիրայր Դանիելյանի պատասխանատվությամբ:

«Շիրակի» մեզ հասած վերջին թիվը հիմնականում նվիրված է սփյուռքահայ գրականության դասական Անդրանիկ Ծառուկյանին, նրա ստեղծագործությանը, կյանքի իրադարձություններին, նրա դասերին ու խորհուրդներին: Սա շատ արժեքավոր մի հատոր է, որ կուտակումներով բացահայտում է մեծանուն գրողի աշխարհը:

«Շիրակը» դարձյալ մեզ հետ է՝ հուրախություն ե՛ւ իր, ե՛ւ բոլորիս համար:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՖԻԿԱ -90»

Այսպես է կոչվում Հայաստանի նկարչի տան երկու ընդարձակ դահլիճներում բացված ցուցահանդեսը, որը այցելուներին ներկայացնում է հայ կերպարվեստագետների վերջին տարիներին ստեղծած գրաֆիկական աշխատանքների ընտրանին: Ցուցահանդեսին մասնակցում են ինչպես ավագ ու միջին սերնդի ճանաչված նկարիչներ, այնպես էլ տաղանդավոր շատ երիտասարդներ, որոնք խոսք ունեն ասելու ժամանակակից մարդուն եւ ինքնատիպ հայացք ու «ձեռագիր»: Հակառակ երբեմնի տխուր ու դատապարտելի փորձին, ցուցահանդեսը կազմվել է մասնակիցների ազատ-անկախ ընտրության սկզբունքով: Մեր առջեւ արդի հայոց գծանկարչության որոնումների եւ նվաճումների ընդհանուր, իրական պատկերն է, թեեւ՝ ոչ ամբողջական, քանի որ հասկանալի պատճառով, հնարավոր չէ մի ցուցահանդեսի շրջանակում ներկայացնել այդ հարուստ ու հետաքրքիր երեւույթի լրիվ դեմքն ու դիմագիծը:

Ի՞նչն է միավորում ցուցահանդեսի մասնակիցներին. ձգտումը «երկխոսելու» ժամանակակից մարդու հետ սիրո, մտքի ու զգացմունքների տառապանքի, գեղեցկության մասին: Իսկ նրանց անջրպետում է գեղարվեստական մտածողության միջոցների տարբերությունը, որը ձեւ լինելուց ավելի, եւ հիմնականում, բովանդակություն է, մտածողության ընթացք, աշխարհը եւ մարդուն նորովի ընկալելու ներքին, բնական պահանջի գեղարվեստական արտահայտություն: Ժամանակակից հայ կերպարվեստում ավանդական հայեցության եւ նոր կողմնորոշումների պայքարն սկսվել է 60-ական թվականներից եւ շարունակվում է առ այսօր՝ իբրեւ լուրջ ստեղծագործական գործընթաց: Դա ներկա է նաեւ այս ցուցահանդեսում, որտեղ նորի ընդգծված ջատագովումը ժողովրդական նկարիչ Ռուբեն Ադալյանի «Շիում» նկարաշարն է եւ արվեստի վաստակավոր գործիչ Հենրի Էլիբեկյանի «Հայաստան» կառույցը:

Վերջին տասնամյակների կերպարվեստը հայ գեղարվեստական մշակույթի ամենից ավելի շարժուն, անհանգիստ, որոնող ասպարեզն է, որ քիչ նվաճումներ չի բերել՝ ճանաչելի դարձնելով նրան նաեւ միջազգային ասպարեզներում: Նկարիչների երիտասարդ սերունդը նույնպես նայում է առաջ՝ երբեմն սուր ու սրված սկզբունքայնությամբ հակադրվելով անցյալին ու երեկվա օրվան: Եվ դա լավ է, որովհետեւ արվեստը զարգանում է ոչ միայն տաղանդի, այլեւ «բանավեճերի» շնորհիվ:

Ցուցահանդեսի այցելուների ուշադրությունն են գրավում Գագիկ Ղազարյանի, Էդուարդ Շատինյանի, Ստեփան Վերանյանի, Ռաֆֆի Աղալյանի, Ռազմիկ Հաջիկյանի, Կարեն Անդրեասյանի, Լյուդվիգ Ավետիսյանի, Թերեզա Բաղդասարյանի, Կարեն Սմբատյանի, Հենրիկ Մամյանի, Արկադի Պետրոսյանի, Արա Հայթայանի եւ շատ ուրիշների գրաֆիկական թերթերը՝ իրենց մտքի շարժումով եւ հուզականությամբ:

«Հայկական գրաֆիկա -90» ցուցահանդեսն ունի հոգեւոր, գեղարվեստական կոչում, որի փորձն ու ավանդույթը պետք է շարունակվի նաեւ հետագայում:

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԺԵԼԱ.«Երազ» շարքից

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ

ԻՍՐԱՑԵԼՅԱՆ ՄԵՐԺ. Բնանկար

Համառոտ այնուամենայնիվ

— ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Ա. Լուկյանովը նամակ էր հղել Ս. Խանզադյանին՝ ԽՍՀՄ պահպանությանը վերաբերող մարտի 17-ի հանրաքվեի անցկացմանը *«համակողմանի օժանդակություն ցույց տալու»* խնդրանքով, որին նշանավոր գրողը պատասխանել էր վճռական մերժումով. *«...Դուք փորձում եք պահպանել այն բռնակալ կայսրությունը, որն անչափ կորուստներ է պատճառել հայ ժողովրդին ու Հայաստանին... Պահանջս է՝ դադարեցնել հայկական Լեռնային Ղարաբաղի հայերի կոտորածները, վերականգնել մարզի օրինական իշխանությունը, ծեր եւ Աղրբեջանի զորամասերը անհապաղ հեռացնել մարզից»:*

— Մոսկվայում տեղի ունեցավ ԽՍՀՄ կոմպոզիտորների միության 8-րդ համագումարը: Ինչպես ստեղծագործական շատ միությունների, այնպես էլ կոմպոզիտորների մտքեղեկական կազմակերպության առջեւ այսօր ծառացած գլխավոր խնդիրը գոյության պահպանումն է՝ նոր սկզբունքներով ու կառուցվածքներով:

— Օրերս տեղի ունեցավ պատմաբանների հայկական ընկերակցության հիմնադիր ժողովը: Հաստատվեց ընկերակցության կանոնադրությունը: Վարչության նախագահ ընտրվեց ԳԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Լենդրուշ Խուրշուդյանը: Ընկերակցությունը պետք է նպաստի աշխարհի հայ պատմաբանների եւ այլազգի հայագետների համագործակցության զարգացմանը:

— Անձի սոցիալական պաշտպանության Երեւանի Խորհրդային շրջանային ֆոնդի «Հույս» հրատարակչությունը լույս է ընծայել Ֆրիդրիխ Նիցշեի «Այսպես խոսեց զրադաշտը» գիրքը, որը նշանավոր, խորհրդային երկրում 70 տարի հալածված փիլիսոփայի գլխավոր աշխատություններից է: Գիրքը նույնական տպագրությունն է 1914 թ. Բաքվում, Վահան Խորենի թարգմանությամբ լույս տեսած հրատարակության:

— Վերջերս հրդեհը ոչնչացրեց Մոսկվայի տաղանդավոր թատրոններից մեկը՝ Ցուրի Պոգրեբնիչկովի ղեկավարությամբ գործող «Թատրոն-ստուդիան», որը աչքի էր ընկնում Չեխովի «Ծայը», «Երեք քույր» պիեսների ինքնատիպ բեմադրություններով:

— Երեքամյա ամերիկացի Սեթ Քինասքը անգիր գիտի հունարեն այբուբենը, գերմաներեն ու իսպաներեն լեզուներով հաշվում է մինչեւ 20-ը եւ, հասկանալի է, վատ չի խոսում անգլերեն: Նա արդեն կարդացել է շուրջ 1200 գիրք:

— *«Ինձ դուր է գալիս պայքարի ընթացքը, երբ մարդիկ ուզում են ինչ որ բանի հասնել: Ղարաբաղը՝ անա իմ թեման»,*- ասում է Ալեքսանդրա Ավագյանը՝ «Թայմզ», «Նյու-Յորք թայմզ», «Լայֆ» եւ ուրիշ նշանավոր պարբերականների ֆոտոթղթակիցը:

— Մոսկվայի Կնոյի տանը տեղի ունեցավ *«Կինոկամերա»* անկախ կինոստուդիայի առաջին ժապավենի ցուցադրումը՝ *«Իսկ Ռուսաստանում նորից անիծյալ օրեր են»*, որն ամբողջովին նվիրված է Գուլագին՝ ստալինյան դժոխքի պատկերմանը:

— Օրերս ԽՍՀՄ գրողների մությունը եւ գրական ֆոնդը որոշում կայացրին՝ գրողների միության յուրաքանչյուր անդամին, անկախ տարիքից, ամսական 100 ռուբլի նպաստ տալու վերաբերյալ: Դա շուրջ 10 հազար գրողների տնտեսական ու սոցիալական ծայրահեղ անմխիթար դրությունը թեթեւացնելու՞ նպատակ ունի, թե՞ քայքայվող գրական կազմակերպությունները փրկելու...

— Պարույր Սեւակի ծննդավայրում ավերակ եկեղեցու տեղում կառուցվելու է նոր եկեղեցի՝ Սովետաշեն գյուղի բնակիչների նախաձեռնությամբ ու միջոցներով: Եկեղեցին դառնալու է մեծ բանաստեղծի ծննդավայրի հոգեւոր խորհրդանիշը՝ նրա բանաստեղծությամբ արդեն ապրող խորհրդանիշի կողքին:

digitised by A.R.A.R.@

Interfax-ը Հայաստանից

ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒՄ

Առ այսօր Հայաստանում 1988 թվականի ավերիչ երկրաշարժի հետեւանքները վերացնող աշխատանքների ծավալը կատարված է ընդամենը քան 15 տոկոսով:

Ուրբաթ օրը այդ բանի մասին հաղորդեց Մոսկվայում գտնվող Հայաստանի մշտական ներկայացուցչությունը:

Մամուլի հաշվետվության մեջ ասվում է, որ միութենական ղեկավարությունը խոստացավ երկու տարում վերացնել երկրաշարժի հետեւանքները: Ներկայացուցչության հաղորդագրության մեջ նշվում է, որ միութենական հանրապետությունները օգնեցին վերականգնել բնակելի ֆոնդը, արտասահմանյան երկրները եւ կազմակերպությունները օգնեցին կառուցել կենցաղային նշանակություն ունեցող օբյեկտներ: Ինչպես հայտնի է, երկրաշարժի հետեւանքով անօթեւան են մնացել ավելի քան կես միլիոն մարդ: Հանրապետության ամբողջ բնակելի ֆոնդի մոտ 17 տոկոսը լիովին ոչնչացվել եւ վնասվել է, չեն գործում ավելի քան 130 արդյունաբերական ձեռնարկություններ:

Ամբողջությամբ վերցրած Հայաստանի տնտեսության կորուստները կազմում են շուրջ 13 միլիարդ ռուբլի:

ԴԱՎԻԹ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԿՈՉԸ

Հայաստանի խորհրդարանի արտաքին հարաբերությունների հարցերով զբաղվող հանձնաժողովի նախագահ Դավիթ Վարդանյանը կոչ արեց Վրաստանում ապրող իր հայրենակիցներին մարտի 31-ին կայանալիք հանրաքվեի ժամանակ քվեարկել անկախ Վրաստանի օգտին: Այդ բանի մասին հաղորդեց «Ախալգազրդա խվերիիելի» լրագիրը:

ՀԱՆՐԱՔՎԵՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը, որը կազմում է ամբողջ բնակչության 80 տոկոսը, չի մասնակցել ԽՍՀՄ-ի հանրաքվեին: Հանրաքվեի նախօրյակին Ստեփանակերտում հավաքվել էին Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի պատգամավորները եւ լիազոր ներկայացուցիչները: Ելույթ ունենալով նորոգված Միության պահպանման կողմ, նրանք դրա հետ մեկտեղ, նշում էին, որ ինքնավար մարզի իշխանության իրավական մարմինների բացակայության պատճառով Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը հնարավորություն չունի արտահայտել իր վերաբերմունքը ԽՍՀՄ ապագա կառուցվածքի հանդեպ:

Ադրբեջանաբնակ Շուշի քաղաքում ըստ չճշտված տվյալների հանրաքվեին մասնակցել էին ընտրողների 25-ից 30 տոկոսը:

ԽՍՀՄ ՀԱՆՐԱՔՎԵ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ կենտրոնական հանձնաժողովի նախագահ՝ Վլադիմիր Օզոլովի հաղորդագրության՝ ԽՍՀՄ-ի պահպանման կողմ քվեարկել են ընտրողների 77,3 տոկոսը: Երեքշաբթի օրը ԽՍՀՄ-ի Գերագույն խորհրդի նիստում ելույթ ունենալով, նա նշեց, որ այս թիվը հիմնված է 1059 տեղամասերից 436 տեղամասերի տվյալների հիման վրա: Ինը միութենական եւ 18 ինքնավար հանրապետություններում քվեարկության ցուցակներում գրանցված էին 178 միլիոն մարդ: Քվեարկությանը մասնակցեցին 136 միլիոն քաղաքացիներ, որը կազմեց 76 տոկոսը:

Ռուսաստանում քվեարկությանը մասնակցեցին ընտրողների 74, Ուկրաինայում՝ 83, Բելոռուսիայում՝ 82,8, Ուզբեկստանում 95,4, Ղազախստանում՝ 88,3, Ադրբեջանում՝ 74,9, Կիրգիզիայում՝ 92,8, Տաջիկստանում՝ 94,4, Թուրքմենիայում՝ 97,7 տոկոսը: Ինքնավար հանրապետություններից եւ մարզերից քվեարկողների ամենաբարձր տոկոսը կազմում է Կարակալպակիայում՝ 98 եւ Հարավային Օսեթիայում՝ 86,1, ամենացածրը Չեչեն-Ինգուշեթիայում՝ 56,1, եւ Կոմիում՝ 62,2 տոկոսը:

Վ. Օզոլովը նշեց, որ ընտրական տեղամասեր էին ստեղծվել նաեւ այլ հանրապետություններում, որոնց ղեկավարները հրաժարվեցին անցկացնել հանրաքվեն: Լիտվայում եւ Լատվիայում քվեարկել էին 500 հազարական մարդ, Մոլդովայում 650 հազար, Էստոնիայում 250 հազար:

Կենտրոնական հանձնաժողովի նախագահը տեղեկացրեց նաեւ, որ մի շարք տեղերում, մասնավորապես Մոլդովայում, որոշ ընտրական տեղամասեր շրջափակված էին եւ նույնիսկ ավերված: Մարտի 17-ի երեկոյան բոլոր տեղամասերը փակվել էին: Այդ կապակցությամբ Մոլդովայի ոչ բոլոր քաղաքացիները հնարավորություն ստացան մասնակցել հանրաքվեին:

Նիստում ելույթ ունեցած պատգամավոր Ա. Զեխտեւը տեղեկացրեց, որ Հարավային Օսեթիայում քվեարկությանը մասնակցեցին 43.950 մարդ, որը կազմում է այդ մարզի բնակչության 72 տոկոսը: Նրանցից միայն 9 քվեարկեցին «դեմ»:

Հանրաքվեի նախնական եւ մոտավոր տվյալները

	կողմ(%)	դեմ(%)
Ռուսաստան		
Մոսկվա	50	46
Լենինգրադ	50	43
Սվերդլովսկ-	34	62
Խաբարովսկ	68	30
Մագադան	64	32
Կամչատկա	64	31
Սախալին	73	24
Յակուտիա	70	27
Վորոնեժ	75	23
Նիժնի Նովգորոդ	70	27
Բելոռուսիա	83	16
Ուկրաինա	73	25
Ուզբեկստան	73	24
Ադրբեջան	80	18
Ղազախստան	94	5
Վրաստան		
Աբխազիա	95	4

(interfax)

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ. «Նոր միութենական պայմանագրի նախագիծը հակասում է հանրապետական անկախության հռչակագրին»

Ուկրաինայի Գերագույն խորհրդի նախագահ Լեոնիդ Կրավչուկը Կիեւում 10 երկրների գլխավոր հյուպատոսների հետ կայացած հանդիպման ժամանակ հայտարարեց, որ նոր միութենական պայմանագրի նախագիծը հակասում է հանրապետությունների կողմից ընդունված անկախության հռչակագրերին: Նա ավելացրեց նաեւ, որ ինքը քվեարկել է նաեւ նոր միութենական պայմանագրի նախագծի հրապարակման դեմ: Այդ փաստաթղթում, նշեց նա, իր լուծում չեն գտել հետեւյալ խնդիրները՝ սեփականության, վարկերի համակարգի, իշխանության կառուցվածքի, դատական գործունեության, հանրապետությունների եւ Միության համատեղ ձեռնարկությունների:

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՀՈՎՎԱՊԵՏԸ ԴԻՄՈՒՄ Է ՄՈՒՍՈՒԼՄԱՆ ՋԻՆԱԿՈՉԻԿՆԵՐԻՆ

Միջին Ասիայի մուսուլմանների հոգեւոր վարչությունը հրապարակեց դիմում, ուղղված խորհրդային բանակում ծառայող իսլամի հետեւորդներին: Այնտեղ կոչ է արվում, որպեսզի նրանք, ովքեր «*անփույթ ու անկարգ*» են ծառայության հանդեպ, ազնիվ ու բարեխղճորեն կա-տարեն իրենց պարտքը:

Հոգեւոր վարչության ղեկավարները խիստ նախազգուշացրին այդպիսի զինծառայողներին, որ իսլամը զինվորական ծառայության հանդեպ անբարեխիղճ վերաբերմունքը համարում է մեծ մեղք, իսկ հայրենիքի պաշտպանությունը ամեն երիտասարդի սրբազան պարտքն է:

Նրանք հայտարեցին, որ աղոթում են, որպեսզի բանակ զորակոչված մուսուլմանները ազնվորեն եւ բարեխղճորեն կատարեն իրենց պարտքը:

ՔՐԴԵՐԸ ՆՇՈՒՄ ԵՆ ՀԱԼԱՊՋԱՅԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Իրաքի քուրդ ազգաբնակչության ներկայացուցիչների խումբը Լոնդոնում հայտարարեց, որ իրաքյան օդային ուժերը այդ երկրի քրդաբնակ քաղաքներն ու ավանները ռազմական ուղղաթիռներով ռմբակոծում են, որի հետեւանքով կան մեծ թվով սպանվածներ եւ վիրավորներ: Իրաքի եւ Մերձավոր Արեւելքի մյուս երկրների քրդերը մարտի 16-ին նշեցին Հալապչայի ողբերգության երրորդ տարեդարձը:

Հիշեցնում ենք, որ երեք տարի առաջ Իրաքի զինված ուժերը կիրառելով քիմիական զենք՝ կոտորածի են ենթարկել Իրաքի Հալապչա քաղաքի ավելի քան հինգ հազար քուրդ ազգաբնակչությանը:

Մարտի 16-ին մի խումբ իրաքցի քրդեր, ի նշան բողոքի, հարձակվելով Գերմանիայում Իրաքի դեսպանատան վրա, այն գրավեցին, եւ նրա պատուհաններից դուրս շպրտեցին շենքում եղած գրասենյակային պիտույքները: Տեղեկություններ կան, որ քրդերը կարողացել են ձեռք բերել որոշ քանակությամբ զենք: Սակայն Գերմանիայի ոստիկանատան կողմից դեռեւս չեն հաստատվել այդ լուրերը:

Իրանի եւ Իրաքի քրդերը մարտի 16-ին Նորվեգիայում նշելով Հալապչայի ողբերգության տարելիցը, ցույցեր կազմակերպեցին: Նման ցույցեր տեղի են ունեցել նաեւ Շվեդիայում: Ֆրանկֆուրտում շուրջ 1000 քուրդ նույն տարելիցի կապակցությամբ կազմակերպված քայլարշավի ժամանակ հանդես են եկել հակաքուրքական կարգախոսներով:

ԻՐԱՆՆ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ Է ՍԱԴԴԱՄԻՆ

Իրանի իսլամական իշխանությունները այդ երկրին ուղղած Սադդամ Հուսեյնի մեղադրանքները մերժելով, զգուշացրեցին, որ շիա մահմեդականները սրբավայրերի նկատմամբ Իրաքի կողմից հասցրած վնասների համար չեն լռի: Իրանի «ազգային անվտանգության խորհուրդը» մարտի 16-ին՝ Սադդամ Հուսեյնի Իրանին հասցեագրած խիստ տոնով արտասանած ելույթից անմիջապես հետո, երկրի խորհրդարանի նախագահ Հ. Ռաֆսանջանիի նախագահությամբ նիստ գումարեց եւ Իրաքի կողմից Իրանին ուղղված բոլոր մեղադրանքներն անհիմն համարեց: Իրանի «անվտանգության խորհրդի» նախագահը նշեց, որ Իրաքի կառավարությունը միայն ժողովրդի կամքին ունկնդիր լինելով կարող է փրկել երկիրը:

Հիշեցնում ենք, որ մարտի 16-ին պրեզիդենտ Սադդամ Հուսեյնը Իրաքի ժողովրդին ուղղված հեռուստատեսային ելույթի ժամանակ (որն ի դեպ Մոցի պատերազմի ավարտից հետո Սադդամի առաջին հեռուստատեսային ելույթն էր) դատապարտելով Թեհրանի ղեկավարներին, նշեց, որ Իրանը վերածվել է հակաիրաքյան ուժերի ռազմահենաղաշտի, եւ Թեհրանը մտադիր է փոխել Իրաքի կարգավիճակը:

Նույն ելույթի ժամանակ Սադդամը նշեց, որ օտար երկրները, օգնելով դավաճան ուժերին, փորձում են Իրաքը վերածել մի նոր Լիբանանի:

Իրանի դատական իշխանության ղեկավար Այաթոլլան Մոհամմադ Ծազդին, արձագանքելով մարտի 16-ի Սադդամի ելույթին, նշեց, որ Իրանի իսլամական հանրապետության հիմնական սկզբունքներից մեկը այլ երկրների ներքին գործերին չմիջամտելն է: Դատական իշխանության ղեկավարը նշեց նաեւ, որ Իրանը Իրաքի ներքին իրադարձությունների ժամանակ միայն փորձում է պաշտպանել ճնշված ազգաբնակչության իրավունքները, իսկ դա չի կարելի միջամտություն համարել:

Իրանի իսլամական իշխանությունների օժանդակությունը վայելող «Իրաքի իսլամական հեղափոխության բարձրագույն մեջլիսի» նախագահ Մոհամմադ Բաղեր Հաքիմին մարտի 17-ի իր ելույթի ժամանակ Սադդամից պահանջեց հրաժարական տալ, հակառակ դեպքում, զգուշացրեց նա, Իրաքում չի դադարի արյունահեղությունը:

ՍԱԽԱԼԻՆԻ ՄԱՐԶԻ ԸՆՏՐՈՂՆԵՐԸ ԴԵՄ ԵՆ ՃԱՊՈՆԻԱՅԻՆ ՀԱՆՁՆԵԼ ԿՈՒՐԻԼՅԱՆ ԿՂԶԻՆԵՐԸ

Միութենական եւ հանրապետական հանրաքվեի հետ մեկտեղ Սախալինի մարզի երեք թաղամասերում անցկացվեց հասարակական կարծիքի հարցում, որը պիտի պարզեր բնակչության վերաբերմունքը Ճապոնիային Կուրիլյան թաղամասի մի քանի կղզիների հանձնման վերաբերյալ: Հարավ-Կուրիլյան թաղամասում հարցմանը մասնակցեցին գրանցվածների 88,95, որից, համաձայն նախնական տվյալների, կղզիների հնարավոր հանձնման հարցին դրական պատասխանեցին 21,5 տոկոսը: Դեմ քվեարկեցին 68,8 տոկոսը: 7,8 տոկոսը առաջարկեցին պատասխանի փոխարեն իրենց տարբերակները:

Կուրիլյան ռջանում այն հարցին, թե «համաձա՞յն եք ԽՍՀՄ-ից, անջատել Իտուռուպ կղզին», «ոչ» պատասխանեցին ընտրողների 71,7 տոկոսը: Ուրիշ թաղամասում մեծամասնությունը նույնպես արտահայտվեց Ճապոնիային կղզիները հանձնելու դեմ:

Ֆուտբոլի ԽՍՀՄ 54-րդ առաջնություն
Բարձրագույն լիգա
մարտի 20-ի դրությամբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. ԲԿՄԱ	2	2	0	0	6-1	4
2. Արարատ	3	2	0	1	2-2	4
3. Շախտյոր	3	1	2	0	4-2	4
4. Դնեպր	2	1	1	0	2-1	3
5. Տորպեդո	2	1	0	1	4-3	2
6. Դինամո Մն.	2	1	0	1	2-1	2
7. Սպարտակ Մ.	2	1	0	1	3-3	2
8 Մետալուրգ Զ.	2	1	0	1	2-2	2
9. Մետալիստ Խ.	2	1	0	1	1-4	2
10. Ջերնոմորեց	2	0	2	0	1-1	2
11. Պամիր	2	0	2	0	1-1	2
12. Լոկոմոտիվ	2	0	1	1	2-3	1
13. Դինամո Մ.	2	0	1	1	2-3	1
14. Պախտակոր	2	0	1	1	1-2	1
15. Դինամո Կ.	2	0	1	1	2-4	1
16. Սպարտակ Վ.	2	0	1	1	2-4	1

Մարտի 19-ին Դոնեցկում տեղի ունեցավ 8-րդ տուրի հանդիպում: «Արարատ»ը պարտվեց տեղի «Շախտյոր»ին՝ 0:2:

ԱԶԳ եռօրյա թերթ. հասցեն՝ Երեւան 375010, Ալավերդյան 47 հեռ. 58-18-41, ֆաքս (8852)562941
AZG semi-weekly, 47 Alaverdian St., Yerevan, Armenia, USSR 375010 phone: 58-18-41, fax: (8852)562941
Խմբագիր՝ Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ
Editor H. AVEDIKIAN
Կոմպյուտերային հրատարակություն
Լույս է տեսնում չորեքշաբթի, շաբաթ
Գինը՝ 30 կոպ.

Տպագրված է ՀԿԿ հրատարակչության տպարանում

digitised by A.R.A.R.@